

Մեծ պատերազմի տարիներուն կ'իյնային երեք ժամանակով իրարու դրացի յիշատակի տարեդարձներ, 1500ամեակը Մաշտոցի մահուան (17 փետր. 440), Մաշտոցի վարժին գրութեանը Կորիւնէն (442) եւ Շահապիվանի ժողովին (444): Ինչպէս Մաշտոց իր գործերով յաւէտ երախտագէտ կը թողնէ զմեզ, նոյնպէս Կորիւն իր փոքրիկ, բայց հոյակապ երկով կը ձգէ զմեզ երախտապարտ: Առանց այս փոքրիկ հատորին պիտի մնար Մաշտոցի մեծ անձնաւորութիւնն եւ իր մեծամեծ գործերը մեզի անձանօթորովհետեւ ինքը միայն նկարագրած է իբրեւ ականատես իր վարդապետին վարժն եւ մեծագործութիւնները. ինքն է միակ ազբիրը յետագայ պատմագիրներու: Միւս կողմէ Կորիւն առաջին աշակերտը կը ներկայանայ Մաշտոցեան Դպրոցին, որ հայ հողին վրայ կը ձեռնարկէ գրի առնել իր յիշողութիւնները Մաշտոցի կեանքէն, եւ ո՛րքան վսեմ ոնով, սքանչելի լեզուով, անխառն ոգեւորութեամբ, նշմարիտ հայրենասիրութեամբ: Առաջին պտուղն է Մաշտոցեան ծառին: Իսկ Շահապիվանի ժողովը, զոր առաջին ազգային ժողովը պէտք է ողջունենք, գումարուած է եւ Կանոններ սահմանած է Ազգին եւ Եկեղեցւոյ ներքին կարգերն ամբապնդելու, ընտանեկան կեանքը բարելաւելու եւ բարձրացնելու, նոր սերունդն ազնուացնելու, բարոյականութեան սպառնացող նորաբոյս աղանդները հերքելու համար: Այն արդիւնքն էր նոր գրականութեամբ ստեղծուած ոգեւորութեան, քրիստոնէական հաւատքի արժարժումին եւ Մտքի եւ Սրտի մշակումին: Դժբախտաբար հնարաւոր չեղաւ այս երեք տարեդարձները իրենց ժամանակին տօնել: Լաւ է ուշ քան երբեք:

Եւ եթէ Գրիգոր Լուսաւորչի մահուան 1700ամեակը, Մաշտոցի մահուան 1500ամեակը կը տօնենք Միսիթար Սեբաստացւոյ մահուան 200ամեակի հետ, այս չկանխատեսուած զուգադիպում կարելի է նկատել, որովհետեւ երեք դէմքերս հայ Մշակոյթի պատմութեան մէջ կը կազմեն երեք անկիւնադարձներ, մէկ է երեքին ալ նպատակը, առաջնոյն սկսածը երկրորդ կը լրացնէ եւ երրորդը իր նախորդներուն աւանդը կը վերարժարծէ, նկրտելով դէպի նոյն նպատակ յառաջադէմ, Աստուածապաշտութիւն, Ազգապահպանում, Մշակոյթ:

Հ. Ն. Ա.

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՇ

219-249

(ՄԱՅՈՒԱՆ 1700 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Ո՛րքան այլափոխուած է Հայոց առաջին Եպիսկոպոսապետի դէմքը դարերու ընթացքին: Թէպէտ ընդունեցաւ Հայ Ժողովուրդը քրիստոսածագ արեւի ճառագայթները, մնաց սակայն 200 տարի անդրադէտ: Ժամանակի այս երկար անջրպետի մէջ կորսնցուց արձագանգը իր հնչիւնը: Ե. դարուն, երբ առաջին անգամ երջանկացաւ Հայը գրականութեան բարիքով, երբ կարդաց Եկեղեցւոյ Սուրբերու եւ անյաղթ Նահատակներու վկայաբանութիւնները, ցանկացաւ ունենալ նաեւ իր Լուսաւորչին, Գրիգորի վարքը: Աւանդութիւնը չունէր իր ծոցը հարուստ մանրամասնութիւններ: Գոհացնելու համար ժողովուրդին հետաքրքրութիւնը յօրինուեցաւ նախ Գրիգորի Խոստովանութիւնը եւ ապա Գրիգորի Գիրքը, ծանօթ Ազաթանգեղոս անունով: Մեր նպատակը պիտի ըլլայ հոս քննութեան առնել մեզի հասած աւանդութիւնը, զանազանել անոր մէջ պատմականն եւ ոչ-պատմականը եւ վերակազմել Գրիգորի կեանքը:

ԳՐԻԳՈՐ ԸՍՏ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ

Հայաստանեսոյ Լուսաւորչին Մեծին Գրիգորի կեանքն եւ գործունէութիւնը պատմած է մեզի Ազաթանգեղոս լայն էջերով իր Հայոց դարձի Պատմութեան մէջ: Ասկէ քաղած են իրենց տեղեկութիւնները յաջորդ ժամանակի պատմագիրները: Լսենք ինչ կը պատմէ Ազաթանգեղոս:

Արտաշիր Սասանեան կ'ապստամբի Պարթեւներու Արտաւան թագաւորի դէմ. կը սպաննէ զանիկա եւ կը տիրանայ Պարթեւաստանի: Յաջորդ տարին կ'արշաւէ Արտաշիրի դէմ Հայոց Խոստովանութիւնը, արշակունի տունէ, Հայ եւ Կովկասեան ցեղերու օգնական զօրքով: Արտաշիր կը պարտուի եւ կը դիմէ փախուստի: Խոստով կը վերադառնայ յաղթական: Յաջորդ տասը տարիներուն կ'ապստամակէ, կ'աւերէ «զամենայն երկիրն սահմանացն որ ընդ Պարսից թագաւորութեամբն» (էջ 18-19):

1*

կեսցես. ապա թէ հաճոյ թուեսցի քեզ տեսիլ զեղոյ նորա, այդքէն առ քեզ պահեսցես» (88): Հայ խուզակները երեւան կը բերեն փախստականները: Տրդատ կը լսէ իր մտերիմներէն Հռիփսիմէի զեղեցկութեան գովութիւնը եւ կը խորհի կնութեան առնել զանիկա: Արքունի սպասաւորը կ'ուզարկուին շուքով արքունիք բերելու կոյսը. որ կը մերժէ երթալ: Կը տարուի բռնութեամբ. բայց երբ նաեւ թագաւորին առջեւ կը մնայ հաստատուն իր կամքին վրայ, կը նահատակուի. վկայական մահով կը մեռնին նաեւ կուսան ընկերները, հոռի ամսոյն 26ին (էջ 78—112):

Տրդատ վեց օր խելակորոյս տրտմաղգած՝ սթափելու համար սուգէն որսի ժամ կու տայ զօրաց. որսավայրն էր Փարական դաշտը: Հագիւ կառք նստած դուրս պիտի ելլէր թագաւորը, յանկարծ կ'այսահարի, դուրս կը նետուի կառքէն եւ «ի նմանութիւն վայրենի խոզաց» կը մտնէ եղեգնուտ եւ խոտակեր կ'ըլլայ: «Դիւարախ մոլեգնէին» նաեւ քաղաքացիներն եւ արքունիքի մարդիկ: Խոսրովի դուխտ, թագաւորի քոյրը, կը լսէ տեսիլքի մէջ, թէ այդ հարուածներու զեղը պիտի սորվեցնէ կապեալն Գրիգոր, որ կը գտնուի Արտաշատի Վիրապին մէջ: Օտայ նախարար պարանով դուրս կը հանէ Գրիգորը:

Առաջին հոգը կ'ըլլայ Գրիգորին ամփոփել Ս. Կուսաններու անթաղ մարմինները: Այսահար դիւարախ մարդկան ապաշխարութեան ժամանակ 66 օր կ'որոշէ: Կը շինէ երեք մատուռ, ուր ի հանգիստ կը փոխադրէ կուսանաց նշխարները: Ապա կը բժշկէ դիւարախները: Ազաթանգեղոս յառաջ բերած է Գրիգորի քարոզութիւնները (էջ 118—377) եւ Գրիգորի Տեսիլը (381—393):

Կը ձեռնարկէ այնուհետեւ մաքրել երկիրը հեթանոսական մեհեաններէ: Սկիզբը կ'ընէ Վաղարշապատէն, ապա կ'անցնի Դարանաղիք (Թորղան, Անի), Եկեղեաց գաւառ (Երէզն աւան, Թիւ) եւ Դերջան (Բազայառիճ գիւղ), ուսկից կը վերադառնայ Վաղարշապատ: Այժմ միայն կը խորհի Տրդատ զԳրիգոր «հովիւ կացուցանել, զի լուսաւորեսցէ զմեզ մկրտութեամբ եւ օրէնսուսոյց խորհրդովն արարչին մերոյ Աստուծոյ» (413): Գրիգոր կ'ուզարկուի Կեսարիա եւ կը ձեռնադրուի եպիսկոպոս Ղեւոնդիոս արքեպիսկոպոսէն: Վերադարձն կ'ըլլայ Սերաստիոյ վրայէն. կը հասնի Տարօն, կը կործանէ Աշտիշատի մեհեանը, կը կառուցանէ եկեղեցի, ուր եւ կը զետեղէ Յովհ. Մկրտչի եւ Աթանազիոնէի նշխարները: Ի Բագուան ընդառաջ եկաւ իրեն Տրդատ ընտանիքով եւ զօրքով. զորոնք մկրտեց Գրիգոր Եփրատի ափին (433):

Ազաթանգեղոս կը գրէ թէ Գրիգոր քարոզեց աւետարանական վարդապետութիւնը երկրի ամէն կողմերը, ծայրէ ծայր (439): Կը հիմնէ եկեղեցիներ, կը կարգէ եպիսկոպոսներ: Այսպէս թեթեւացնելով աշխատանքը, նուիրուեցաւ ինքը միանձնական թեւացնելու լեռնային անապատներու մէջ, յատկապէս «ի տեսական կեանքի լեռնային անապատներու մէջ, յատկապէս «ի Դարանաղեաց գաւառին, ի լեւրինս որ կոչի Մանեայ այրք, յաճախատին» (452). որ առիթ տուաւ թագաւորին եւ ժողովուրդին նապատին» (452). որ առիթ տուաւ թագաւորին, թէ Գրիգոր զանգատելու: Այս առիթ կ'իմացնեն թագաւորին, թէ Գրիգոր Կեսարիոյ մէջ որդիներ ունի. Վրթանէս եւ Արիստակէս կը բեկեարիոյ մէջ որդիներ ունի. Վրթանէս եւ Արիստակէս կը բեկեարուին Վաղարշապատ. վերջինս կուսակիթօն էր, որ եւ կը ձեռնադրուի Գրիգորէն եպիսկոպոս եւ նախ հօրը տեղապահը կ'ըլլայ եւ ապա յաջորդը:

Համբաւ կը հասնի Հայաստան, թէ ի Հռոմ ինքնակալ կայսր հռչակուած է Կոստանդիանոս, որ ազատութիւն շնորհած է եկեղեցոյ եւ ինքնին պաշտպան կանգնած քրիստոնէութեան: Տրդատ առած հետը Գրիգորն, Արիստակէսն եւ Աղբիանոս եպիսկոպոսը այցելութեան կ'երթայ Կայսեր եւ կը վերադառնայ (459): Քիչ յայցելութեան կ'երթայ Կայսեր ժողովն, որուն կը մասնակցի Արիստակէս: Գրիգորի մահը չի յիշեր Ազաթանգեղոս:

ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Ազաթանգեղոս որ եւ է ժամանակագրական ցուցմունքներ չէր բերէ իր բովանդակ Մատենին մէջ: Նկատի առնելով պատմական զէպքերը, հետեւեալ պատկերը կը ստանանք:

Արտաշիւր Սասանեան սպանեց Պարթեւներու թագաւորն Արտաւան Դ. 226ին: Ըստ Դիոն Կասիոսի (2, 3) 228ին յարձակեցաւ Հայաստանի վրայ եւ պարտուեցաւ: Այս զէպքն է Ազաթանգեղոսի յիշած Խոսրովի յաղթութիւնը. 231—233 տարիներուն Հայերը իրրեւ դաշնակից Սեւերոս Աղեքսանդրի, մասնակցած էին Կայսեր արշաւանքին Արտաշիւրի դէմ. եւ ինչպէս Հերոդիան (2, 5, 6) կը պատմէ, Հռոմէական բանակին մէկ մասը Հայաստանի վրայէն մտաւ Մարաց աշխարհը գերելով գերիելով: Բոլորովին անճիշդ չէ ըստ այսմ նաեւ այն տեղեկութիւնը, թէ Խոսրով (իմացիր Տրդատ) շարունակեց ասպատակել պարսկական սահմանները դեռ 10 (կամ 11) տարի, որոնք կ'ընդգրկեն 228—239 տարիները (Gutschmid, Agat., 47—48): Այս հաշուով Անակ Հայաստան հասած պիտի ըլլայ 239 տարւոյն ձմեռը, իսկ Խոսրովի սպանութիւնը եւ

Արտաշիրի արշաւանքը դէպի Հայաստան պատահած ըլլալու են 240 զարնան. նոյն միջոցին նաեւ Գրիգորի եւ Տրդատի փախուստը դէպի Կեսարիա եւ «ի կողմանս Յունաց»: Արտաքին աղբիւրներու համաձայն այս տարւոյն հանդիպած է Արտաշիրի մահն ալ: Չկայ սակայն անոնց քով որ եւ է խօսք, թէ Արտաշիր երբ եւ է ժամանակ Հայաստանը նուաճած ըլլայ: Բայց կը վկայեն թէ 252/3ին Հայաստանի տիրացած է Շապուհ Ա., եւ Տրդատ Հայոց թագաւոր տեղի տալով հզօրագոյն ոյժին ապաստան փնտռած է Հռոմայեցւոց քով: Ինչպէս «Սոսրովի» եւ Արտաշիրի կոիւներու համար արժանահաւատ աղբիւր ունեցած է Ագաթանգեղոս, նոյն աղբիւրէն կրնար ծանօթ եղած ըլլալ Տրդատի փախուստն, բայց ոչ «մանկիկ», այլ հասուն հասակին:

Հետեւելով Ագաթանգեղոսի տուեալներուն՝ Գրիգոր եւ Տրդատ տակաւին մանուկներ էին երբ տարուեցան ի կողմանս Յունաց, հաւանօրէն 5 տարեկան, ուստի ծնած ըլլալու են իբր 235ին: Արտաքին աղբիւրներէ գիտենք, թէ Տրդատի հայրը վախճանած էր 216ին, ուստի իր հայրը չէր կրնար Արտաշիրի օրով Անակէ սպանուած ըլլալ: Գրիգոր կ'աճի, ի չափ հասակի կը հասնի, կ'ամուսնանայ, կ'ունենայ երկու զաւակ, Վրթանէս եւ Արիստակէս. առ այս պէտք է գոնէ 20 տարուան միջոց մը ենթադրել. ուստի Տրդատի քով ծառայութեան մտած է իբր 260ին: Կ'ըսուի թէ այս տարւոյն «իշխանն Յունաց» քրիստոնէից դէմ հաւածանք հանած էր. 259—268 շրջանին հռոմէական կայսրն էր Գաղիենոս, որուն օրով եկեղեցին չհաւածուեցաւ: Այս շրջանին կը կատարէին Գոթերը ի Դակիա եւ ի Պանոնիա արշաւանքներ. եւ կրնար Տրդատ մասնակցիլ կոիւներուն. բայց պատմագիրը ժամանակակից թագաւորը Դիոկղետիանոս (284—305) գիտէ:

Կ'ըսուի թէ Տրդատ սնաւ Լիկիանէս կոմսի քով: Սօսքը Լիկիանոս կայսեր (307—324) մասին է, որ Դիոկղետիանոսի օրով Գաղերիոսի տակ արեւելեան բանակին մէջ կը ծառայէր (295): Եթէ Տրդատ Լիկիանոսի յանձնարարութեամբ «Յունաց իշխանի» տեղ մենամարտութեան կ'ելլէ Գոթաց թագաւորին հետ, հոս Դիոկղետիանոս միայն կրնայ իմացուիլ. այս «իշխանն Յունաց» է որ Քրիստոնէից դէմ հաւածանք հրատարակեց 23 փետր. 303:

Ագաթանգեղոսի տուեալներու վրայ յեցած դժուար է ստուգել Տրդատի թագաւորութեան Ա. տարին: Լիկիանոսի անուան յիշատակութիւնը կը ստիպէ 297 տարին նկատի առնել (տե՛ս վարը): Եթէ Տրդատ ա՛յս տարին Հայաստան դարձաւ, դժուարին կ'ըլլայ Գրիգորի 13 տարիները, զորոնք անցուց վիրապի մէջ

298—310 տարիներու մէջ զետեղել. վասն զի պատմագրին համաձայն Գրիգորի բանտարկութեան ժ. Գ. տարւոյն (310) Հայաստան կու գան Հռիփսիմեանք փախչելով Դիոկղետիանոսէն, մինչ 60ամեայ Դիոկղետիանոս տկարութեան պատճառաւ հրաժարած էր գահէն 305ին եւ վախճանած ի Նիկոմեդիա 312ին:

Կը գրէ Ագաթանգեղոս, թէ Տրդատ երբ վերադարձաւ Հայաստան, գտաւ հոն երկիրը Պարսից իշխանութեան տակ. 240էն մինչեւ 305 կ'ընդգրկէ 65 տարիներ, այսքան երկա՞ր հանդուրժուեցան Պարսիկները Հայոց, եւ առաւել Հռոմայեցւոց կողմէ: Կ'ըսուի թէ Տրդատ իր թագաւորութեան բովանդակ տեւողութեան պատերազմ մղեց Պարսից դէմ: Մեզի ծանօթ է արտաքին, նաեւ ներքին աղբիւրներէ, թէ 297ին Պարսից եւ Հռոմայեցիներ, նաեւ ներքին աղբիւրներէ, թէ 297ին Պարսից եւ Հռոմայեցիներ մէջ կնքուած խաղաղութեան դաշինքը մինչեւ 338 յարգուեցաւ թէ Հռոմայեցւոց եւ թէ Պարսից կողմէ. այս խաղաղութիւնը կ'արժէր Հայաստանի սահմաններու ալ: Այս միջոցին (312) Հայերը բախում մ'ունեցան միայն Մաքսիմիանոս Դազայի հետ, զէպք մը որ անծանօթ մնացած է «ժամանակակից» Ագաթանգեղոսի:

Գրիգոր եպիսկոպոս կը ձեռնադրուի Կեսարիա Ղեւոնդիոս արքեպիսկոպոսէն: Ղեւոնդիոսի առաջին տարին ծանօթ չէ մեզի. գիտենք միայն, թէ ան 325ին ներկայ էր Նիկիոյ ժողովին:

Տրդատ եւ Գրիգոր այցելեցին Հռոմ տեսակցելու Կոստանդիանոս միահեծան Կայսեր հետ. այն է 323էն ետքը եւ 325էն յառաջ: Այս այցելութեան ժամանակ կը տեսակցին անոնք նաեւ Հռոմի Եւսեբիոս քահանայապետին. սա եւ Մելքիադէս կը յիշուին ընդ մէջ 311—314 տարիներուն. ուստի ժամանակագրութիւնը թոյլ չի տար 324—325ին ի Հռոմ համանուն քահանայապետ մը ենթադրել:

Յիշեմ ի վերջոյ, որ այն սահմանները, զորոնք կը գծէ Ագաթանգեղոս իբրեւ Գրիգորի քարոզութեան շրջան, այս ինքն հիւսիսէն Սատաղ քաղաք, Խաղտիք, Կաղարջք, Կասպից դուռ, եւ հարաւէն Ամիդ, Մծբին, Նոր Շիրական, Մահքերտ տուն եւ Կորդուք, չեն համապատասխաներ Գ. դարու քաղաքական հանգամանքներուն, այնու որ այս շրջագիծը կ'ենթադրէ Մեծ Հայաստանի 297էն յառաջ ունեցած տարածութիւնը: Նոյնը պէտք է ըսել նաեւ այն երկու իշխանացանկերու համար զոր կու տայ պատմագիրը: Ագաթանգեղոս փոխ առած է տեղիքներս հնագոյն աղբիւրէ մը, որ Գ. դարու պատմութիւնը նկատի ունէր:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Այս համառօտ ակնարկն Ագաթանգեղոսի Պատմութեան բովանդակութեան վրայ եւ անոր հարեւանցիկ քննական վերլուծումը կը բերեն զմեզ այն աննախադաշար համոզումի, թէ հեղինակը, որ ինքզինքը դիպաց ակնատես եւ ժամանակակից կը ներկայացնէ, շատ անկատար տեղեկութիւն ունեցած է 226—326 տարիներու քաղաքական եւ եկեղեցական իրադարձութիւններու մասին: Իր հազորդած տեղեկութիւնները ոչ ակնատեսի, ոչ ժամանակակիցի եւ ոչ ալ մերձժամանակակիցի հաւաստումներ են. ան ոչ միայն ժամանակագրութեան անհմուտ է, այլ եւ ժամանակի գաղափարին անտեղեակ. իրեն համար ժամերը օրեր են, օրերը տարիներ. ուղած է ոչ թէ պատմութիւն գրել, այլ պատմութիւն շինել. չէ սիրած ստուգապատում պատմագրել, այլ սուտապատում ճարտարախօսել: Եղած է ընթերցասէր, կարդացած է Ե. դարու դրական արտագրութիւնները, ըլլայ թարգմանական, ըլլայ ինքնուրոյն. բայց անձամբ չէ հրահանգուած դպրութեան արուեստին մէջ քաջապէս. գրած է արտօրանքով, ուստի եւ ժամանակ պակասած է իրեն ամբողջն ճարտարօրէն վերամշակելու, կրկնութիւնները բառնալու եւ չափազանցութիւնները սանձելու: Այս պատճառով ալ թող չգարմանան ո՛չ ինքը հեղինակը եւ ո՛չ ալ իր բարեհաւատ ընթերցողները, որոնք «հաստատուն եւ անխալ» ու «ճշմարտարան» համարեցան այն «կարգադրութիւնք»ն (Սուտ Ղազար Փարպեցի, էջ 3), եթէ ժխտենք անոր արժանահաւատութիւնը:

Անձանօթ հեղինակը ծպտած է «Ագաթանգեղոս» անունին տակ, որ իր կրկին նշանակութիւններով յարմար էր պատմութեան բովանդակութեան, կազմուած յն. ἄγαθος, «բարի» եւ ἀγγελοσ, «լրարեր, տեղեկատու, աւետարտ, դեսպան, հրեշտակ» բառերէ, որ նաեւ «բարի լուր, աւետիք» իմաստն ունի: Այս անունով ծանօթ եղած է իրեն անձ մը, որ ժամանակակից է Տրդատի. անոր հրամանով արձանագրութեան մը գրիչ: Արձանագրութիւնը գտած է Փաւստոս Սանատրուկ թագաւորէն կառուցուած Մծուրք քաղաքի մէջ. այդ յունարէն արձանագրութիւնը արտագրած էր Փաւստոս եւ զետեղած իր ժամանակագրութեան մէջ եւ կ'ըսէ թէ ունէր այսպիսի վերնագիր. «Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսօրիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց հրամանաւ քաջին Տրդատայ, առեալ ի դիւանէ արքունի» (Հանդ. Ամս. 1938, էջ 21—34):

Այս Ագաթանգեղոս, որ «քաջին», այսինքն թագաժառանգ Տրդատի հրամանով փորագրած էր արձանագրութիւնը, Գ. դարու առաջին տասնեակին, առանց տարակոյսի կամ յոյն էր եւ կամ հռոմայեցի. երկու ազգերու քով ալ դորձածական էր անունս: Հայ կեղծանուն հեղինակը, որ ինք զինքը կը ներկայացնէ «ի քաղաքէն ի Մեծն Հռովմայ... հռոմայերէն եւ յունարէն ուսեալ դպրութիւն... հասեալ ի դուռն Արշակունւոյ յամս քաջի եւ առաքինւոյն... Տրդատայ» (էջ 9—10) եւ կ'ընդունի «գիրամանս... քաջարանց» Տրդատայ «գրել զայս ամենայն» (էջ 469), ցոյց կու տայ թէ ծանօթ է արձանագրութեան փաւստոսի հայերէն թարգմանութենէն. բայց չէ գիտցած «քաջ» եւ «քաջարանց» պատուանունները զանազանել, որովհետեւ իր օրով, երբ չկար հայ արքունիք, չկար նաեւ պատուանուններուս դորձածութիւնը, ուստի նիք, չկար նաեւ պատուանուններուս դորձածութիւնը, եւն բառերու համադր: «քաջ» ածական մըն էր «առաքինի, հօր» եւն բառերու համադր:

Ինչպէս յոյն Ագաթանգեղոս արքունի դիւանէն, նոյնպէս ինքը պաշտօնական վաւերաթուղթերէն օգտուած է. տուած է Տրդատի, Դիոկղետիանոսի, Ղեւոնդիոսի հրովարտակները, նոտարներու գրի առած հարցաքննութիւնները եւ այլն: Իր ձեռքին տակ սակայն կը տեսնենք մենք միայն վաւեր եւ անվաւեր վկայաբանութիւններ, Ս. Հարց գրութիւններ, թարգմանուած ասորբէնէն եւ յունարէնէ, հայ Աստուածաշունչը, Փաւստոս, Կորիւն, Մաշտոցի յաճախապատում ճառք եւ այլն: Այդ կեղծանուն հեղինակը եկեղեցական է, բազմաշրջիկ. ծանօթ Հայաստանի գլխաւոր վայրերու, յատկապէս Այրարատի, Տարօնի, Եկեղեցաց գաւառի, Դարանաղիքի եւ Դերջանի սրբավայրերու: Ինքը Հռոմէական Հայաստանէն կ'երեւայ, աշխարհահայեցութեամբ մէտ արեւմտեանց: Գրիգոր, Արիստակէս, Վրթանէս, նաեւ Տրդատ «ի կողմանս Յունաց» կ'առնեն իրենց կրթութիւնը. Գրիգոր ի կեսարիա կը ձեռնագրուի Ղեւոնդիոս արքեպիսկոպոսէն. կը հաւանի որ իր յաջորդներն ալ ենթարկուած մնան կեսարիոյ մետրաբազմութիւն», զորոնք քահանայ կը ձեռնագրէ: Չկայ որ եւ է իսօք ասորի դորձակիցներու կամ հայ եկեղեցւոյ Եղեսիայի հետ ունեցած յարաբերութիւններու մասին: Գրիգոր երբ կը ձեռնարկէ կործանել հեթանոսական մեհեանները, Այրարատէն (Վաղարշապատ) կ'անցնի Դարանաղիք (Թորդան գիւղ, Անի ամրոց), Եկեղեցաց գաւառ (Երէզն աւան, Թիլին աւան), Դերջան (Բագայառիճ գիւղ) եւ կը վերադառնայ Վաղարշապատ. յետոյ, կեսարիայէն վերադարձին միայն կ'այցելէ Տարօն եւ կը կործանէ անուանի

Ստեփանոս Աստղնիկ (էջ 82) կը գրէ. «Իսկ յաւուրս Վահանայ յայտնեցան նշխարք սուրբ առաքելոյն Թադէոսի եւ Սանգիստոյ եւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»:

Ուրիշ հեղինակ մը⁴, որ Ագաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ հետեւելով կազմած է Գրիգորի համառօտ Վարքը, ի կատարածին կը գրէ. Գրիգոր «գնաց յԱյրն Մանեսայ... եւ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց: Եւ հովուացն գտեալ յեցեալ ի վերայ գաւազանի եւ այնպէս կայր վախճանեալ: Եւ ամս բազումս ծածկի աստուածային տեսչութեամբ, զի մի ի պաշտօն անուցուն նորահաւատքն:

«Իսկ յորժամ յայտնեցան հաւատք կողմանցս այսոցիկ ի ժամանակս Զենոնի կայսեր եւ Վահանայ Մամիկոնէից տեսուն մարգպանութեան, յայտնեցաւ ումեմն ճգնաւորի Գառնուկ անուն. եւ բերեալ եղաւ ի գեղն Թորգան: Զայս լուեալ Զենոնի՝ առաքէ զօրս բազումս ընդ զօրավարին Միջագետաց, զի յայնժամ տիրէին կէս աշխարհիս Հայոց, զի ոչ գոյր Թագաւոր Հայոց: Եւ զօրավարն բազում լէգէոնս զօրօք եկեալ՝ առ զնշխարս սրբոյն Գրիգորի եւ ետ զաջն Հայոց վասն յառաջագոյն լուսաւորելոյն զնոսա, եւ այլ մասն ինչ. եւ զայլն տանի ի Կոստանդնուպոլիս եւ այլ մասն ի սրբոց Հռիփսիմեանց. եւ եղաւ անդ ի տապանի. եւ ի թուին ՅԻՆ (876) յայտնեցաւ:

«Բայց եւ զայս ի գրոց տեղեկացաք, որ եւ ճշմարիտ է, եթէ յորժամ յայտնեցաւ ճգնաւորին Գառնկայ, հրամայեաց նմա եւ եղ ի հիմն եկեղեցւոյն որ ի Թորգան. եւ ի խնդրելն Թագաւորին Զենոնի, ետուն զնշխարս Գրիգորի Արշարունեաց եպիսկոպոսի. որ էր այր առաքելի եւ սուրբ. եւ յանուն նորա մեծարեցաւ. ուր եւ գտանի մասն ինչ. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս»:

Գրիգորի Նշխարաց գիւտը, որ կը պատահի Վահան Մամիկոնեանի մարգպանութեան (485—504⁶) եւ Զենոն Կայսեր (474—491, ապրիլ 11) օրով, բնականաբար ոտք պիտի հանէր Դարանադեաց եւ այլ շրջակայ գաւառներու հայ ժողովուրդը: Գիւտին հետ սերտիւ կապուած է նշխարաց փոխադրութիւնն Մանեսայ Այրքէն Թորգան գիւղը, ուր հարկ էր առ այս կառուցանել պատշաճ մատու մը կամ եկեղեցի իրրեւ հանգստարան Գրիգորի նշխարներուն: Սովորութիւն է Սրբոց Նշխարաց փոխադրութեան առիթով գրել սուրբին Վկայաբանութիւնն կամ Վարքը: Ինձ կը թուի թէ Գրիգորի Վարքը հրապարակ հանուած է Տեսիլքին հետ միաժամա-

⁴ Ակինեան, Յուլիոսի հայ. Զեոպոլիտի Բէյրութի, Թ. 6, Մ. Գարբիէլեան, Ժողովածոյք յամէ 1316, թղ. 86ա—բ:

նակ: Վասն զի հարկ էր Տեսիլքը հաւատալի ընծայելու համար նախ ցոյց տալ թէ Գրիգոր իր վերջին օրերը անցուցած է Դարանադիքի Մանեսայ Այրք լեռան վրայ: Ագաթանգեղոս ոչ միայն Գրիգորի կայանը Դարանադիքի Մանեսայ Այրք լեռան յանապատին ցոյց կու տար, այլ եւ Գրիգորի բերանը դրուած նախադատութեամբ մը մարգարէօրէն կը նշանակէ անոր ի հանգիստ փոխադրութեան ժամանակը «գարին մտելոյ եօթներորդին» որ ճշդիւ 491/2 փրկչական տարին մասնացոյց կ'ընէ, Վահան Մամիկոնեանի օրով: Գիւտը առանց տարակուսի 492էն քիչ յառաջ տեղի ունեցած պէտք է ըլլայ, տալու համար ժամանակ եկեղեցւոյ շինուցած, ուստի Զենոնի վերջին 490/1 տարիներուն: Այսպիսի պարզաներու մէջ ինքնին հասկանալի է, որ «Գրիգորի Գիրքը» ամբարազաներու մէջ ինքնին հասկանալի է, որ «Գրիգորի Գիրքը» ամբարազաններու համար հարկ էր անոր հեղինակը Տրդատի ժամանակահատից անձնաւորութիւն մը ցոյց տալ, ազգով Հռոմայեցի, որ պիտի կից անձնաւորութիւն մը ցոյց տալ, ազգով Հռոմայեցի, որ պիտի ծանօթ էր, «Ագաթանգեղոս գրիչ»: Հռոմէական Հայաստանի գրքեր կը մատակարարէր Մեծ Հայաստան, ըլլայ թարգմանական, ըլլայ ինքնուրոյն. թարգմանիչներ կային նաեւ Հռոմէական Հայաստան, որոնք իրենց արտադրութիւնները կ'արտածէին Պարսկական Բաժին: Այս պարագաները նպաստածացոյց էին կեղծիք մը թէ սահմանէն ասդին եւ թէ սահմանէն անդին իրրեւ նոր յայտնութիւն ներկայացնելու: «Ագաթանգեղոսի» Մատեանը չափազանց շատ թարգմանութիւններ կ'աւելցուցանէ իրրեւ թարգմանութիւն Մեծ Հռոմ. Հայաստանի ծանօթացուցաւ Պարսկ. Բաժին իրրեւ Հայաստանի. իսկ նոյնը արտածուցաւ Պարսկ. Բաժին իրրեւ թարգմանութիւն Հռոմէական Բաժնին: Այսպէս երկու կողմերն ալ պիտի ընդունէին զայն գրկարաց եւ առանց երկրայութեան, որպէս «հաստատուն եւ անսխալ կարգադրութիւնք, զորս պատիրրեւ «հաստատուն եւ անսխալ կարգադրութիւնք» (Կեղծմեաց մեզ երանելի այրն Աստուծոյ սուրբն Ագաթանգեղոս» (Կեղծմեաց Փարպ., էջ 3): Ագաթանգեղոս, ըստ ամենայն հաւանականութեան 602էն վերջը ծանօթացաւ Մեծ Հայաստան, այն շրջանին, երբ երկու Բաժիններ մէկի վերածուցան (602—630): Առաջին անգամ Կոմիտաս Կաթողիկոսի ձեռքը կը տեսնենք:

«Մանեսայ այրք», ուր գտնուած են Գրիգորի Նշխարք, առաջին անգամ յիշուած է Ագաթանգեղոսի մէջ, զոր ձեռագիրք պէսպէս ուղղադրութեամբ կը ներկայացնեն, այսինքն «Մանեսայ այրք, Մանէայրք (a), Մանեսայ այր, Մանայ այր (Ա.Բ), Մանայրք» (tv էջ 452). ուշ ժամանակի աղբիւրներու մէջ կոչուած է նաեւ Սեպուհ, Գոհանամ: «Այս լեռուն անկանի յարեւելս հարաւոյ

Եզնկայ քաղաքին, մերձ առ մենաստանն Տատասկի եւ սրբոյն Կիրակոսի, եւ է ապառաժուտ անրոյս եւ բարձրագագաթն, քանզի նստեալ կայ ի վերայ այլոց լեռանց»⁵: Կը համապատասխանէ այս նկարագրութեան Ազաթանգեղոսի արտայայտութիւնը «ի Դարանաղեաց դաւառին, ի լեռինն որ կոչի Մանեայ այրք (Մանայարք), յանապատին»: Առանց տարակուսի լեռան բուն անունն էր «Մանայարք», իսկ «Մանեայ այրք» ժողովրդական ստուգարանութիւնը, իբրեւ թէ Մանի կոյս այն տեղ «այրի» մը մէջ կը ձգնէր (հմմտ. Յովհ. Դրասխանակերտցի, էջ 156 էմին):

Գառնիկ ըստ Խորենացոյ «ձգնաւոր» էր. ան կը բնակէր «ի վերայ Կթնոյ» ի Բասեն: Ուրիշ ձեռագիրներ կը կարդան «ի վերայ գեղին աւան Գթնոյ». ոմանք «ի գեղջէն յՕրրնկայ» (Տաշեան, Յուգ., էջ 67) կամ յՈրրնկայ եւ յԱւրնկոյ (Աւգերեան, անդ, 357), վերջինս է ըստ ամենայն հաւանականութեան, Աւրնիկ բերդն ու աւանը նոյն Բասենի մէջ: Այս տեղ ընդունեցաւ հաւանօրէն Տեսիլը: Ուրիշ տեղեկութիւն չունինք Գառնիկի մասին. անոր գերեզմանը ցոյց կու տան ի Թորդան (Վարդան աշխարհագիր, Բազմավէպ, 1887, էջ 139):

Թէ Գառնիկ, յանուրջս կամ յարթնութեան գիւտ մ'ըրած է Մանայարք լեռան վրայ չենք կրնար ժխտել. բայց թէ այդ հնագրեան մարդու կմախքը Գրիգոր Լուսաւորչին ըլլայ, կը մնայ խնդրական: Չարմանալի է միայն, որ մի եւ նոյն ժամանակամիջոցին, Վահան Մամիկոնեանի մարդպանութեան ժամանակ, կը հանդիպին Հայաստանեայց երկու լուսաւորչներու, Թադէոսի եւ Գրիգորի նշխարներու յայտնութիւններ, մէկը Կիրակոս եւ միւսը Գառնիկ ձգնաւորներու ձեռքով, մին Արտաղ եւ միւսը Մանայարք լեռան վրայ:

Հաւանօրէն ինչպէս հովիւներն եղան, որ ամփոփեցին Գրիգորի մարմինը գմբեթածեւ կուրգանի մէջ, նոյնպէս հովիւներ եղած ըլլան, որոնք վեր հանեցին այդ կուրգանը այն ապառաժուտ եւ անրոյս լեռան վրայ. եւ պատմեցին ձգնաւոր Գառնիկին իրենց գիւտը, եթէ չուզենք ենթադրել, թէ ձգնաւորն ինքնին առաջին գիւտարարն եղած ըլլայ: Այսպիսի կուրգաններ կամ դամբաններ մեծ յաճախութեամբ երեւան կու գան Հայաստանի բարձրագագաթ լեռներու վրայ⁶. անոնք հնագրեան շրջանին կը պատկանին.

⁵ Հ. Ղ. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 100—101 (Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Ման Ա., հատոր Ա., Վենետիկ 1806):
⁶ Հմմտ. Յ. Թոփճեան, Յուցակ ձեռագրայ Դարանաղեայ Կիրակոսի. Ման Բ., էջ 61—74 եւ Ե. Լալայեան, Ազգագրական Հանդէս, ԺԴ (1906), 5—37. ԺԹ (1910), 59—84:

Խաչիկ Վ. Դարեան Ձուանչէրի (Պաչէնքի) շրջանին եւ Ե. Լալայեան Նոր Բայաղիտի (Գեղարքունիք) շրջանին կատարած են նման հնագրեան դամբաններու պեղումներ, ուր միօրինակ ձեւով կը տեսնուին մարդկային կմախքներ պսղած կեցուածքի մէջ, թասեր եւն: Հնամանք յեցած դաւազանի, շուրջը պուտուկներ, թասեր եւն: Հնագրեան այդ կուրգանի ներքին բովանդակութեան նկարագրութիւնը հետաքրքրական կարող է ըլլալ նաեւ այսօր հնագէտներու: Այս տեսակէտէ կարելի է շնորհակալ ըլլալ Գառնիկ ձգնաւորի: Այս տեսակէտէ կարելի է շնորհակալ ըլլալ Գառնիկ ձգնաւորի: Բայց անոր հաւաստումը, թէ յիշեալ կմախքը Գրիգոր Լուսաւորչինը եղած ըլլայ, չենք կրնար ընդունիլ, ցորչափ դիտենք, թէ 450ին եւ 484ին ծանօթ էին Հայոց «Սուրբ նշխարք ձգնազգեաց նահատակին Գրիգորի» (Փարպ. 55, 176) եւ «մատուռն Ս. Գրիգորի» ի Բազուան (անդ, 139, 141):

ՍՈՒՐՈՎ. ԱՆԱԿ, ՄԱՆԿԻԿՆ ՏՐԴԱՏ

Ազաթանգեղոս իր Պատմութեան քաղաքական բաժնին համար ելակէտ ընտրած էր Խոսրովի սպանութիւնն, Արտաշիրի յառաջախաղացութիւնն եւ «Մանիկի» Տրդատի փախուստը «ի կողմանս Յունաց»: Այս յատակադիժի համար օրինակ առած է Տրմանս Յունաց»: Այս յատակադիժի համար օրինակ առած է Տրմանի գերութիւնը, Ներսէճի արշաւանքն եւ մանուկ Արշակի փախուստն «ի կողմանս Յունաց». գէպքեր, զորոնք պատմած է Փաւստոս իր Պատմութեան Գ. 20—21 գլուխներու մէջ: Այս գլուխները կը համառօտեմ այսպէս.

Փիսակ, Տիրանի սենեկապետը, կը բամբասէ իր տէրը Աւրպատականի Վարագ-Շապուհ մարդպանի առջեւ ըսելով, եթէ «Այնչափ ի հեռ եւ ի նախանձ ի չարակնութեան եւ ի թշնամութեան... եւ յաներկիւղութեան առ թագաւորն Պարսից եւ առ ամենայն զօրան Պարսից» է Տիրան, որ «ի կայսր եւ ի զօրս նորասանայ. զի ասէ թէ Մեր լեալ է եւ հարցն մերոց այն տէրութիւնն. արդ, ասէ, չեմ ծուղալոց՝ մինչեւ դարձցի պատիւ հարցն նախանաց, գնախնի զթագաւորութիւնն այսրէն առ որդի եւ առ զաւակ նոցա յազգս իմ եւ ի տուն իմ եւ յանձն իմ դարձուցանեմ»: Մարգպանը կը հաղորդէ այս բամբասանքները իր թագաւորին Ներսէճի (293—302): Ներսէճ կը հրամայէ Մարգպանին «հնար գտանել, մարթել ճանապարհս, մեքենայիւք դայթակղութիւնս դնել, որսալ ըմբռնել զարքայն Հայոց»:

Ասոր վրայ Մարգպանը կը յայտնէ Տիրանի, թէ կը փախաբի իրեն այցելութեան գալ. «ի հաշտութիւն խաղաղութեան՝ դառնվ

խօսել ընդ նմա, զանձուկ սիրոյ պատճառեալ՝ համարձակութիւն խնդրէր գալ նմա առ նա»։ Տիրան նոյն Փիսակի ձեռքով «փութապէս վաղվաղակի մեծաւ ուրախութեամբ առ ինքն կոչել հրամայէր» զՄարգարան։ Կ'որոչէ Ապահունեաց Աղիորսք քաղաքը հիւրասիրել զանիկա եւ որսով պատուել։ Վարազ-Շապուհ առած հետը իբրեւ շքադիր երեք հազար սպառազէն զօրք, «յանդիման եղեւ թագաւորին յերկրին Ապահունեաց եւ մեծապէս մեծարեցաւ ի նմանէ»։ Ընդունելութեան չէին մասնակցած Հայոց թագաւորին զօրավարները, նախարարներն եւ աւագ տանուտէրները, վասն զի դժտուած էին իրեն հետ։ Թագաւորին ընկերացած էին միայն սակաւաթիւ սպասաւորներ, ուսովիրայ մարդիկ, «հանդերձ... խառնադանջ խորանապահ զօրուն եւ ուսմիկսպաս զօրօքն եւ տիկնաւն հանդերձ [եւ արքայորդին մանուկն Արշակ]»։ Որսէ եւ այլ հիւրասիրութենէ ետքը Մարգարանն ինքն կը հրաւիրէ զարքայն իր ճամբարն, «ի պատիւ մեծարանաց կոչէր» յընթրիս։ «Ապա իբրեւ ընդ գինիս մտին, քաջ արբեալ լինէին թագաւորն եւ որ ընդ նմայն էին, զօրն դարանակալ... զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին եւ վահանափակք շերտաւորացն պատէին զթագաւորն Տիրան. եւ կալեալ կապեալ զոտս եւ զձեռս նորա ի կապս երկաթիս։ Եւ զրանակն զոր գտանէր, աւար հարկանէր. եւ զգանձս եւ զստացուածս, զկին եւ զորդիս թագաւորին, զոր գտին ի բանակին, խաղացուցին յերկրէն Ապահունեաց»։ Դալարիս գիւղի մէջ կը խարեն թագաւորին աչքերը։ «Խաղայր զնայր ճեպով իշխանն... եւ երթայր յԱտրեստան առ տէրն իւր»։

«Լուր եղեւ այս ամենայն կործանումն... թէպէտ եւ ժողովեցան կազմեցան, գունդ եղեն, պատրաստութեամբ զհետ կրթէին Վարազայ, ոչինչ կարացին հասանել»։ Հայ նախարարները խորհրդի կը նստին, Անդոկ Սիւնին եւ Արշաւիր Կամսարականը կ'ուղարկեն «առ թագաւորն Յունաց», խնդրելու անոր օգնութիւնը։ Այս միջոցին «ի կողմանց արեւելից խաղաց գնաց ինքն Ներսէս արքայն Պարսից, զալ առնուլ, այրել եւ աւերել, կորուսանել եւ միահաղոյն իսկ յիւր վտարել զսահմանս Հայաստան երկրին»։ Հայ բանակը ապաստան կը փնտռէ Հուոմայեցոց քով. «յայնմ ժամանակի ազատագօրքն նախարարացն Հայոց առեալ զիւրաքանչիւր ընտանիս < եւ զարքայորդին զմանուկն Արշակ > լինէին փախստականք՝ ի կողմանս Յունաց անգանէին, գոյժ տային Կայսերն, բազմազունդ բանակին նախարարացն»։

«Թագաւորն Յունաց չու արարեալ զայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից»։ Ի Բասեն, Ոսխա գիւղին մէջ կը խորտակուի Պարսից բանակը, Ներսէս մագապուրծ կը փախչի Պարսկաստան. կը փութայ դեսպան զրկել զնելու խաղաղութիւնը։ Յունաց թագաւորը «Վաղէս» պայման կը դնէ. «Նախ դու թիւնը։ Յունաց թագաւորը «Վաղէս» պայման կը դնէ. «Նախ դու, ասէ, դարձուցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց եւ զթագաւորն ինքնին գլխովին»։ Ներսէս կ'արձակէ հայ գերիներն եւ աւարամասն։ Երբ կ'ըսուի Տիրանին թէ նստի իր գահը միւս եւ անգամ, կը պատասխանէ. «Անօգուտ է ինձ եւ անպատշաճ է, կուրութեամբ անմարթ իսկ է կարի ունել զթագաւորութիւն. Յայնմ ժաբայց փոխանակ իմ թագաւորեցոյ զԱրշակ զորդի իմ։ Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զԱրշակ զորդի նորա ի վերայ աշխարհին Հայոց» (Գ. 21)։ «Խաղաց զնաց Արշակ արքայ Հայոց մեծաց... եկն եհաս յերկիրն Հայոց եւ ժողովեաց զցրուեալս երկրին եւ թագաւորեաց ի վերայ նոցա։ Եւ եղեւ խաղաղութիւն մեծ ի ժամանակին յայնմիկ» (Գ. 1)։

Փաւստոսի բնագիրը բոլորովին անաղարտ չէ պահուած. զիջուած են անկէ հատուածներ, փոփոխուած են հոն ինչ ինչ գեղջուած են անկէ հատուածներ, փոփոխուած են հոն ինչ ինչ տեղիքներ։ Յունաց թագաւորին անունը անգամ մը միայն յիշուած է. «ապա գրէր (տպ. գտեալ) հրովարտակ թագաւորն Յունաց Վաղէս առ արքայն Պարսից» Ներսէս անուն (էջ 49)։ Վարազ-Շապուհ երբ կ'այցելէ Տիրանին յԱղիորս, կային հոն սահալաք միայն «հանդերձ... ուսմիկսպաս զօրօքն եւ տիկնաւն հանդերձ եւ արքայորդին մանուկն Արշակ»։ Հոս ընդգծուած պարբերութիւնը յայտնապէս երկրորդ ձեռքէ է. պէտք է ըլլար «եւ արքայորդուի մանկամբն Արշակաւ»։ Իսկ Վարազ-Շապուհ կը գրէ «... զգանձս եւ ստացուածս, զկին եւ զորդիս թագաւորին»։ Տիրանի որդւոց մասին խօսք չէր եղած վերագոյն։ Յաջորդներէն կ'իմացուի թէ Արշակ հօրը Տիրանի հետ Պարսից Ներսէս թագաւորին մօտ գերութեան մէջ է, զանիկա Ներսէս կը թագաւորեցնէ եւ կ'արձակէ Հայաստան։

Երբ Փաւստոսի խմբագիրը Վաղէս կայսրն (364—378) եւ Ներսէս թագաւորն (293—302) ժամանակակից կը ներկայացնէ, եւ պարտուած Ներսէսին զԱրշակ թագաւորեցնել կու տայ յաղթական Հուոմայեցոց գերիշխանութեան տակ գտնուած Հայաստանի գահին վրայ, ապացոյց կ'ընծայէ, թէ որքան անտեղեակ է թէ ժամանակագրութեան եւ թէ քաղաքական պատմութեան։ Փաւստոս պատասխանատու չէ։ Սկզբնաղբին մէջ պէտք է անպատճառ պատմուած ըլլար ոչ միայն Արշակի «ի կողմանս Յունաց»

նայ» փախցուելը, այլ եւ անոր զօրավարի մը խնամքի տակ առնուելը եւ Կայսեր կողմէ թագ ընդունելը: Ասոր վկայ է Ագաթանգեղոս, որ, երբ Տրդատի մասին կը խօսի, գիտէ թէ ան փախցուեցաւ եւ «երթեալ սնեալ եւ ուտեալ Տրդատէս (կարգա՛ Տրդատայ) առ կոմսի ումեմն Լիկիանէս անուն կոչեցելոյ»: Այս տեղիքը փոխառութիւն է Փաւստոսի Գ. 21 գլխէն. Լիկիանէս, այն է Լիկինիոս զօրավարն, որ 295—297 տարիներուն պարսկական պատերազմին պատերազմակիցն էր Գաղերիոս Կեսարի Միջագետք եւ Հայաստան, որ ապա կայսերակից անուանուեցաւ (306) եւ վախճանեցաւ 324ին. իսկ Հռոմէական Կայսրն էր Դիոկղետիանոս (284—305):

Այս տեղ յիշուած պատմական դէպքերը, որոնք տեղի ունեցած են 294—298 տարիներուն, շահագործած է Ագաթանգեղոս իր Պատմութեան համար, դերակատարներու անունները միայն փոփոխելով. այսինքն՝

Փաւստոս	Ագաթանգեղոս
Տիրան (295)	Խոսրով Ա. († 216)
Ներսէս (293—302)	Արտաշիր Ա. (226—240)
Վարազ-Շապուհ պարսիկ մարզպան.	Անակ պարթեւ նախարար
Արշակ թագաւոր (298)	Տրդատ Բ. (217—253)

Պատմական բեմի վրայ դերերու այս բաժանումով եւ դերակատարներու փոփոխումով բնականաբար թէ պատմութիւնն պիտի այլայլէր եւ թէ ժամանակագրութիւնը պիտի խախտէր:

Բեմադրութիւնը կը սկսի ողբերգութեամբ եւ կ'աւարտի դիւցազներգութեամբ: Գրուածքս կարելի էր նկատել վիպասանական գրականութեան սեռ մը, եւ այնպէս անոր լուսաւոր եւ ստուերոտ կողմերը զննութեան առնել, եթէ «Ագաթանգեղոս» բառականանար իր այս գրական երկով եւ քաջութիւնը հրապարակէ: Բայց մենք կը տեսնենք զինքը միջամուխ հիմն ի վեր բրելու Հայոց Պատմութեան չէնքը:

ՓԱՒՍՏՈՍ ԵՒ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Որպէս զի ամէն կասկած իր Պատմութեան արժանահաւատութեան նկատմամբ բառնայ, աճապարած է «Ագաթանգեղոս» լռեցնել Փաւստոսը, որ միայն կարող էր յայտնանախառ խայտառակել զինքը: Այս պատճառաւ ալ ձեռք մխած է Փաւստոսի Պատմութեան մէջ, քանզի փրուզած է անոր զեղեցկայարմար ժա-

մանակագրութեան թումբերը համընթաց ընծայելու համար անոր հոսանքը իր արտուղի ժամանակագրութեան:

Տրդատ Բ. կը փախցուի ի կողմանս Յունաց 295ին. կը վերադառնայ թագաւոր պսակուած Դիոկղետիանոսէն (284—305): Գրգաթանոսի կը յաջորդէ Կոստանդիանոս (305—338). Տրդատ Դիոկղետիանոսի կը յաջորդէ Կոստանդիանոսի (323): Արիստակէս ներկայցելէ միահեծան Կոստանդիանոսի (325): Յաջորդ ժամանակի կայ կը գտնուի Նիկիոյ ժողովին (325): Յաջորդ ժամանակի կայսրներէն ծանօթ է Փաւստոսի այժմեան Պատմութեան միայն Վաղէս (364—378): Պարսից թագաւորներէն Արտաշիր (226—240), Ներսէս (293—302) եւ (սկսեալ Գ. 16էն)՝ Շապուհ Բ. (309—379): Այս 298—379 տարիներու մէջ պէտք է յաջորդած ըլլան Տրդատ (իրբ 298—325), Խոսրով Բ. Տիրան, Արշակ, Պապ, Վարազդատ, Արշակ-Վաղարշակ եւ Խոսրով Գ.: Այսպէս նաեւ Գրիգորի յաջորդները մինչեւ Ասպուրակէս:

Ինչպէս վերագոյն ակնարկեցի, «Ագաթանգեղոս» ոչ միայն ժամանակագրութեան անտեղեակ էր, այլ եւ ժամանակի զաղափարը կը պակսէր անոր: Այլապէ չէր կրնար ան Փաւստոսի Պատմութեան դէմքերն ու դէպքերը այս 325—380 տարիներու միջոցին մէջ դասաւորել: Տրդատ որ «մանուկ» հասակին գահ կը բարձրանայ 298ին, չէր կրնար իրբ 60 տարիներու մէջ որդւոց որդի 5 սերունդ ունենալ, եւ ոչ ալ Գրիգոր իր ցեղէն նոյնքան թուով յաջորդութիւն ծաղկեցնել: Այս անհամութիւնը չենք կրնար վերադրել Փաւստոսի, «մեծի ժամանակագրի Յունաց», որուն Պատմութեան 350—385 տարիներու դէպքերը ճշդիւ կը համապատասխանեն արտաքին ժամանակակից աղբիւրներու, որ երաշխիք կ'ընծայէ թէ ստուգիւ մեծ պատմագիր եղած է:

Այս տեղ մեր նպատակը չէ ոչ Փաւստոսի Պատմութիւնն ուսումնասիրել եւ ոչ ալ Գ., Գ. դարու քաղաքական պատմութիւնը քննութեան առնել. բայց կը պահանջէ տեղս 297 տարւոյ քաղաքական փոփոխութիւնները մերձուտ նկատել եւ այս բարձրավանդակէն դիտել Հայոց թագաւորներու յաջորդութիւնը 297էն յառաջ եւ ետքը:

Կարոս կայսր, որ յաղթական միջամուխ եղած էր Պարսկաստան, սպանուեցաւ 283ին. իր յաջորդն կնքեց խաղաղութիւն. երբ Հայաստան եւ Միջագետք մնացին Հռոմայեցւոց: 293ին սասանեան գահը բարձրացաւ Ներսէս. սա 296ին պատերազմ հրատարակեց Հռոմայեցւոց ետ ստանալու համար այս երկիրները: Դիոկղետիանոս կայսր, որ մասնաւորապէս Արեւելեան պետութիւնն ունէր իր վարչութեան տակ, Ներսէսի դէմ ուղարկեց իր

Կեսարն Գաղերիոս Մաքսիմիանոս, բերա, բայց քաջ զօրավարն: Պատերազմի սկիզբը աննպաստ եղաւ Հռոմայեցւոց. Պարսիկները մտան Միջագետք եւ յառաջացան մինչեւ Պառան. անոնց դէմ հանեց Գաղերիոս Ասորիքի լեգէոնները Եփրատէն անդին. Նիկեփորիոնի եւ Պառանի միջեւ ընդհարուեցան երկու բանակները. պարտուեցաւ Հռոմէականը: Մեծ հարուած էր այս եւ երիտասարդ զօրավարը ստիպուեցաւ լսել ծանր կշտամբանք. բայց չընկճեցաւ: Մերձակայ արշաւանքի համար նոր ոյժեր բերուեցան պետութեան ամէն կողմերէ. Կայսր եւ Կեսար անձամբ իջան պատերազմի դաշտ: Դիոկղետիանոս զիրք բռնեց ստուարագոյն բանակով Միջագետք, մինչ Գաղերիոս զօրացած իլլիրական ընտիր գունդերով անցաւ Հայաստան առաջնորդութեամբ հայ նախարարներու (Անդոկի Սիւնի եւ Արշաւիր Կամսարական), լրտեսեց Ներսէսի բանակը, որ նստած էր Բասենի Ոսիսա գիւղը, եւ գիշերախառն յարձակմամբ ջախջախեց պարսկական բանակը. իր զօրաց աւար ինկաւ արքունական ճամբարը, գանձն ու կանայք: Ներսէս մազապուրծ ճողոպրեցաւ թշնամւոյն ձեռքէն: Որպէս զի ետ ստանայ իր ընտանիքը՝ պատրաստ ընծայեց ինքզինքը թագաւորը գնել խաղաղութիւնը ամէն գնով: Ինչպէս Փաւստոս կը գրէ, Կայսեր առաջին պայմանն էր, դարձնել Հայաստանէն տարուած գերութիւնն ու գանձերը. գերիներու թուին մէջ էին Տիրան թագաւոր եւ իր ընտանիքը: Ներսէս ստիպուեցաւ զիջիլ Հռոմայեցւոց նաեւ Հայաստանէն երկրամասեր. Անգեղ-տան եւ Ծոփաց հայ սատրապութիւններն մէկ կողմէ — այսինքն Եփրատէ մինչեւ Նիմփիոս (այժմ Բատման-սու) գտնուող երկիրները — եւ Աղձնիք, Կորդուք եւ Ծաւղէք մէկալ կողմէ, այսինքն Նիմփիոսէ մինչեւ Կորդուք եղած երկիրները⁷:

Արտաքին ազրիւրները խօսք չեն ըներ հայ դահին վրայ եղած փոփոխութեան մասին: Ինչպէս տեսանք վերագոյն, Տիրանի որդին մանուկն Արշակ փախցուած էր ի կողմանս Յունաց եւ կը գտնուէր Գաղերիոսի բանակին մէջ Լիկիոնիոս զօրավարի ձեռքի տակ: Հռոմայեցւոց կողմէ (այսպէս իմանալու է Փաւստոսի տեղիքը) առաջարկուեցաւ Տիրանի վերստանալ իր գահը. բայց ան կուրութեան պատճառաւ հրաժարեցաւ ի նպաստ իր Արշակ որդւոյն: Արշակ Բ. ստացաւ թագը Դիոկղետիանոսէն, ուստի 297/8 տարւոյն եւ վերադարձաւ Հայաստան: Փաւստոս կը գրէ (Դ. 1).

⁷ Հմմտ. Եւարոպ. 9, 25. Պետրոս Պարսիկոս, Հատակոտորք, 14: Th. Mommsen, Römische Geschichte, V, 443—445. Գաթրըճեան, Տիեզ. Պատմութիւն, Բ. 462: Հիւրշման, Հին Հայոց տեղւոյ անուններ, էջ 30—31:

«Եւ եղեւ խաղաղութիւն մեծ ի ժամանակին յայնմիկ... եւ էին անկասկածք (բնակիչք երկրին) բնակեալ ի խաղաղութեան մեծի ընդ հովանեաւ արքային Արշակայ», վասն զի «կարգեցան, կազմեցան, յօրինեցան, խաղաղեցան (պայմանք) աշխարհ(ի)ն Հայոց մեցան, յօրինեցան, խաղաղեցան» այս ինքն Պարսից եւ Հռոմայեցւոց, ի մէջ երկուց թագաւորացն» այս ինքն Պարսից եւ Հռոմայեցւոց, որ շարունակուեցաւ Արշակ Բ. ի թագաւորութեան բովանդակ տեւողութեան, մինչեւ Կոստանդիանոս Մեծի մահը (338):

Փաւստոս Դ. 3 կը պատմէ նաեւ թէ Արշակի դահակալութեան առաջին տարին ներկայացան իրեն հայ ժողովուրդի կողմէ պատգամաւորներ եւ խնդրեցին Եկեղեցւոյ համար ալ հովուապետ. «վասն զի նորոգեաց Աստուած զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է յայնմ (ի Գրիգորի) դուակէ նորոգել զհոգեւոր նահապետութիւնն». եւ առաջարկեցին թիկնածու զՆերսէս, Աթանազենի տուրիւնն». եւ առաջարկեցին թիկնածու զՆերսէս, Աթանազենի տուրիւնն: Նկատի առնելով, որ Ներսէս վախճանած է 34 տարի հոնորիւն: Նկատի առնելով, որ Ներսէս վախճանած է 34 տարի հոնորիւն կ'իյնայ 338/9ին. ուստի հարկ է ենթադրել թէ հոս «Ներսէս» անունը ուրիշ անունն տեղ դրուած է. գիտենք որ 325ին Հայոց եպիսկոպոսապետն էր Արիստակէս. ուստի իմանալու է հոս փոխանակ Ներսէսի Արիստակէս, որ հովուած կ'ըլլայ Հայոց եկեղեցին 298—338:

ԱՐՔԱՅԱՑԱՆԿ ԵՒ ԵԿԵՂ. ԳԱՒԱՋԱՆԱԳԻՐԻՔ

Այսպէս կ'ունենանք թագաւորական եւ կաթողիկոսական գահերու վրայ 298ին Արշակ Բ. եւ Արիստակէս: Այս կէտէն դէպի յառաջ եւ դէպի ետ ընթանալով կը ստանանք.

- Արշակ Բ. 298—338/9
- Տիրան Բ. 339—349
- Արշակ Գ. 349—368
- Պապ 368—374

- Արիստակէս 298—338
- Ներսէս ամս ԼԳ. 338—372
- Զոնակ (Սահակ) հակաթ.
- Յուսիկ Բ. 373—374

Տիրան Բ. չի յիշուիր հայ արքայացանկին մէջ. բայց հարկ է ենթադրել, վասն զի թէ Արշակ Բ. ի եւ թէ Արշակ Գ. ի հայրերը այս անունը կը կրէին:

- Տիրան Ա. 297—284
- Խոսրով Բ. 283—272

- Փառնեբոսէ ամս Դ. 297—294
- Յուսիկ ամս Զ. 294—289
- Գրիգորիս ամս ԺԵ. 289—272
- Վրթանէս ամս ԺԵ. 272—258
- Մեհրուժան ամս Է. 257—250
- Գրիգոր ամս Լ. 249—219

- Արտաւազդ 272—253
- Տրդատ Բ. 252—217
- Խոսրով Ա. † 216

ՏՐԴԱՏ Բ.

Անտոնինոս Կարակալլա (211—217) կ'ուզէր բովանդակ Արեւելքը հռոմէական իշխանութեան ենթարկել: 215/6ին, երբ Անտիոք կը գտնուէր, կանչեց իր մօտ Եղեսիոյ թագաւորն Արգար, կալանաւորեց եւ Եղեսիա (Ոսրոէնէ) հռոմէական նահանգ հրատարակեց. քիչ յետոյ իրեն կանչեց Հայոց թագաւորն (Սուրով Ա.), արդելափակեց եւ Հայաստան հռոմէական նահանգ հռչակեց: Այս լուրին վրայ ապստամբեցաւ Հայաստան, թագաժառանգն Տրդատ թագաւոր հրատարակուեցաւ, որ եւ խնդրեց Պարթեւներու օգնութիւնը: Ասոր վրայ Անտոնինոս բազմաձեռն բանակով արեւելք հասաւ (216), ընկճելու Հայերը, եւ եթէ հարկ ըլլայ նաեւ Պարթեւները: Թէպէտ Հայաստան ուղարկուած հռոմէական զունդը ուժեղ ընդդիմութեան բախեցաւ, բայց Տրդատ յուսահատ իրաց ելքէն Պարթեւներու քով ապաստան փնտռեց: Հռոմայեցիք պահանջեցին զինքը Պարթեւներէն. վաղարշ Զ., որ թագին շուրջ իր եղբօր Արտաւանի հետ կուռի մէջ էր, առաջին պահանջքին լռեց, երկրորդ պահանջքի վրայ յանձնեց: Պարթեւներու հետ պատերազմը սկսած էր: 217 դարնան, երբ Կայսրը երկրորդ արշաւանքի ձեռնարկած էր, սպանուեցաւ: Իր յաջորդն Մակրինոս (217—218) խաղաղութիւն կնքեց Պարթեւներու հետ. իսկ Տրդատի՝ թագ ուղարկեց: Այսպէս սկսաւ Տրդատ իր թագաւորութիւնը, զոր այս անգամ իբրեւ աւատ ընդունած էր Հռոմայեցիներէն:

Տրդատ Բ.ի օրով տեղի ունեցաւ այն մեծ փոփոխութիւնը Պարթեւներու աշխարհին մէջ, որ Արեւելքի ճակատագիրը որոշեց. 224—228ին Պարթեւական տէրութեան կը տիրանար Սասանեան հարստութիւնը: Արտաշիւր Սասանեան տանելով յաղթութիւն Արտաւան Ե.ի (213—227) վրայ՝ դիմեց Միջագետք եւ Ասորիք. ապա դարձուց զէնքը Մարաց դէմ եւ նուաճեց այն երկրին մեծ մասը: Այնուհետեւ յարձակեցաւ Հայաստանի վրայ, ուր փախած էին Արտաւանի որդիներն եւ ուրիշ բազմութիւն մը Մարաց աշխարհէն. այստեղ կրեց Արտաշիւր չարաչար պարտութիւն եւ աճապարեց փախուստի. գնաց նոր զօրք ժողովելու: Այսպէս Դիոն Կասիոս, որ կ'աւարտէր իր Պատմութիւնը 229ին: Կերեւայ թէ Արտաւան երկրորդ փորձ մը չփորձեց Հայաստանը նուաճելու: Ան կարեւորագոյն համարեցաւ Միջագետքի նուաճումը, ուր փոխադրուեցաւ ուղղադաշար:

Աղեքսանդր Սեւերոս (230—234) անհրաժեշտ տեսաւ բանալով Արեւելք փութալ խորտակելու համար պարսկական վտանգը:

Երեք առաջքի բաժնեց իր զօրքը. մին խաղաց Միջագետք. երկրորդը մտաւ Պարսկաստան եւ երրորդը գնաց դաշնակից Հայաստանի օգնութեան եւ յառաջացաւ միջամուխ Մարաստան: Սեւերոս չքեղ յաղթութիւն մը տարաւ Պարսից վրայ: Միջագետքի այն մասերը, զորոնք Հեղինոգարադոս թշնամիներուն թողուցած էր, ետ դրաւուեցան: Կոիւները յառաջ չմղուեցան: Սեւերոս ստիպուած էր Արեւմուտք վերադառնալ. իսկ Պարսիկները ի վիճակի չէին շարունակելու յարձակումները: 234ին կնքուեցաւ երկու կողմերու մէջ խաղաղութիւն, որ տեւեց մինչեւ 238:

Արտաշիւրին յաջորդեց իր որդին Շապուհ Ա. (241—272). որ վերսկսաւ պատերազմը Հռոմայեցւոց դէմ: Գրաւեց Մծբինն ու Խառանը. սակայն Գորդիանոս Գ. (238—244) կրցաւ վերագրաւել զանոնք. ան ջախջախեց քանի մը ճակատներու մէջ պարսկական ուժեր եւ սպառնաց նոյն իսկ քալել Տիգրոնի վրայ: Շապուհ չայժը եւ սպառնաց նոյն իսկ քալել Տիգրոնի վրայ: Շապուհ չայժը արաւորուած Արորա գետին քով, քաշուած էր իր պետութեան խորքերը: Բայց Հռոմայեցիք չկրցան օգտուիլ յաղթութեանէս, որովհետեւ քաջն Գորդիանոս սպանուեցաւ Փիլիպպոս Արաբացիէն, որ կայսր հռչակուեցաւ: Փիլիպպոս (244—249) հարկադրուեցաւ խաղաղութիւն գնել Շապուհէն եւ վերադառնալ Հռոմ: Այս դաշնագրութեամբ Միջագետքն եւ Հայաստանը Պարսից կը թողնէին Հռոմայեցիք: Սակայն Հռոմ այս ամօթարեր դաշինքին երբեք հաւան չգտնուեցաւ: Երբ գահ բարձրացաւ Գաղղոս (251—253), սկսան Պարսիկները միւսանդամ խլրտիլ. կերպարանքի հիման վրայ Հայաստան մտաւ եւ նուաճեց երկիրը, ապա շինքի հիման վրայ Հայաստան մտաւ եւ նուաճեց Մծբինն ու Խառանը. իսկ միջամուխ եղաւ Միջագետք եւ գրաւեց Մծբինն ու Խառանը. իսկ Բաբելոն գիւմարեց: Չոնարաս, որ այս դէպքերու միակ պատմիչն է, կը գրէ. «Ասոր (Գաղղոսի) օրով Պարսիկները սկսան խլրտիլ, որոնք մտան գրաւեցին Հայաստանը, ուսկից փախաւ Տրդատ թագաւոր. իսկ անոր որդիները Պարսիկներուն անցան»⁸:

Այս Տրդատն է հաւանօրէն համանուն Արշակունին, որ առաջնորդ եղած էր Սեպտիմիոս Սեւերոսի (193—211), երբ ան կ'արշաւէր Պարթեւներու վրայ (Դիոն Կասիոս, Հե. 9, 3). որ ապա Անտիոքոս շնական փիլիսոփայի հետ փախաւ Կիլիկիայէն խոյս տալով Հռոմայեցիներէն, Հայաստանի թագաւոր անուանուեցաւ, ու յետոյ Պարթեւներու քով ապաւէն խնդրեց. բայց պահանջուեցաւ Կարակալլայէ (հմմտ. Դիոն Կաս. Հե. 19 եւ 21):

⁸ Չոնար. յի. 21. Մոմմզէն, անդ, 418—422. Գաթրըճեան, անդ, 178—179:

պատերազմներու մասին, պէտք է այժմ իմանալ Տրդատ Բ.ի վերաբերեալ. «Իբրեւ ետես թագաւորն Պարսից (Արտաշիւր) զայն ամբոխ բազմութեան գնդի (զԽոսրովու), զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա... ոչ կարաց ունել զդէմ նորա, փախստեայ լինէր առաջի նոցա...: Եւ (Հայք) ամս մետասան (ուրիշ ձձ. տասն) ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն եւ ընդ իշխանութեամբն էր» (Ագաթ. 18—19):

Ահլքի առաջ ունենալով նաեւ 198—252 մարտամբոխ տարները դիւրին պիտի ըլլայ ըմբռնել այն նկարագրական գիծերը, զորոնք կը հաղորդէ Ագաթանգեղոս Տրդատ Բ.ի անձին եւ գործերուն մասին: Այս տեղիքները, ինչպէս լեզուէն կը զգացուի, հին աղբիւրէ փոխառութիւններ են, հաւանօրէն փաւստոսէն, ուր յառաջ բերուած են ժողովրդական վիպասանութենէ հատուածներ, վիպական չափը բռնաբար քանդուած է մանր յաւելուածներու պատճառաւ:

Տրդատ կը պարծի (էջ 109—110).

«Զի զՅունաց աշխարհն եւ զՀռոմոց քաջ գիտեմ,
եւ զմեր Պարթեւաց կողմանն,
վասն զի բնութեամբ իսկ է մեր.
եւ զԱսորեստան եւ զՏաճկաստան եւ զԱտրպատական.
եւ զի՞ < իսկ > մի ըստ միոջէ թուեմ,
զի բազում տեղիք այն են, որ իմ խաղաղութեամբ հասեալ է,
եւ բազում այն են, որ մարտիւ պատերազմաւ
աւարի ասպատակեալ»:

«Իսկ զամենայն ամս ժամանակաց իւրոց թագաւորն Տրդատ զոռացեալ ընդ Պարսից տէրութեանն խնդրէր զքէն վրիժուց մարտիւք պատերազմաց» (76):

«Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոց թագաւորութեանն աւերէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն. զաշխարհն Ասորեստանի աւերէր եւ հարկանէր ի հարուածս անհնարինս: Վասն այսօրիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ

Իբրեւ զսէզն Տրդատ որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց,
եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց:
Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձս, անչափ հզօր զօրաւոր».

⁹ Տղ. «Եւ այլ ուժով պնդութեան հարստութեամբ». հմտ. 109. «Եւ արդ որ այնչափ հզօր զօրաւորն էր եւ բուն ոսկերօք»:

Եւ բունն ոսկերօք եւ յաղթ մարմնով,
Քաջ եւ պատերազմող անհնարին,
Բարձր եւ լայն հասակաւ:
Որ զժամանակս կենաց իւրոց պատերազմեալ
Եւ առնէր մարտիցն յաղթութիւն:
Եւ մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր,
Եւ զհոյակապ շքեղութիւն յաղթութեան
Ընդ ամենայն աշխարհ կացուցանէր (հռչակեցուցանէ՞ր):
Հարկանէր ի հարուածս զթշնամիսն,
Եւ խնդրէր զքէն վրիժուցն իւրոց հայրենեացն:
Առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորեց,
Եւ թափէր կողոպուտ սաստիկ անհնարին [ի նոցանէ]:
Արկանէր ի սուր զզօրս Պարսից,
Եւ թափէր կողոպուտ < սաստիկ > անհնարին:
Լինէր առաջնորդ առն եւ ձիոյ զօրացն Յունաց.
Եւ մատնէր նոցա զբանակս նոցա:
Հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ,
Եւ գերէր զկողմանս Պարսից (էջ 71—72):

«Որ այնչափ անուանի եղեալ քաջութեամբ
Առաւելոյր ի մարտս պատերազմացն:
Նաեւ յՈղոմպիադան Յունաց հսկայազօր երեւեալ,
Բազում գործս արութեան եւ անդ ցուցեալ:
Եւ ոչ սակաւ մղեալ պատերազմունս
Յայնկոյս Եփրատ գետոյ ի կողմանս Տաճկաց.
Ուր եւ կարեվէր խոցեալ՝ ելանէր երիվարան ի պատերազմէն.
Իսկ նորա առեալ զերիվարն եւ զասպազէն նորին,
Եւ զիւր զառնազէնն առեալ կապեալ ի թիկունսն,
Ի վերայ մկանանցն ի լիւղ անցանէր ընդ գետն Եփրատ» (108):

Տրդատ որդին էր Խոսրովի, ուստի կարող էր իր քոյրը շատ պատշաճութեամբ անուանուած ըլլալ Խոսրովիդուխտ: Իր կինը կը կոչուի Աշխէն:

Ագաթանգեղոս մանր հանդամանքներով կը պատմէ Տրդատի մենամարտութիւնը Գթաց թագաւորին հետ. նոյնը Սեբիոս (առնելով Փաւստոսէ⁹ն) կարճառօտիւ կու տայ այսպէս.

«Կայսերակերպ շքեղութեամբ Տրդատէս ելանէ ախոյեան ընդդէմ արքային Գթաց. եւ անդէն ձերբակալ արարեալ զախոյեանն անարի՛ զթագաւորն Գթաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի»:

որմը «երեւեցաւ... կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի... երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով եւ մատանեաւ երանելոյն Սահակայ կաթողիկոսի. զոր նա ոչ համարձակեցաւ բանալ. եւ կնքեալ իւրով եւս մատանեաւ», այսինքն Կոմիտաս կաթողիկոսի (Սերիոս, 88) : Թովմաս Արծրունեոյ համաձայն Գրիգոր Լուսաւորիչ «Սրբոց Հռիփսիմեանց վկայարան» մ'ալ վասպուրականի Զորոյ վանքի մէջ շինած է (էջ 63 եւ 214) : Մ. Դասխուրանցի (Ա. 21, էջ 50) կը յիշէ Հռիփսիմէի եւ Գայիանէի նշխարներ Արցախի Դարահոջ գիւղին մէջ «զոր էր բերեալ երիցուն Մատթէ անուն, ի Յովհաննէս Հայոց կաթողիկոսէ († 574), զոր ունէր նորին մատանեաւ կնքեալ» :

Ս. Գայիանէի եկեղեցւոյ շինութեան մասին խօսած է Յովհաննէս կաթ. Դրասխանակերտցի. «Հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին եւ մթին էր զնա շինեալ՝ քակեալ զայն եւս ընդարձակագոյն եւ պայծառագոյն զնա շինեաց կոփածոյ քարամբք եւ կրով ձուլելով» (էջ 46) :

Այս տեղիքները ցոյց կու տան, թէ Ե. դարուն կային ուրոյն մատուռներ վաղարշապատի մէջ, ուր ամփոփուած էին Ս. Հռիփսիմէի եւ Ս. Գայիանէի նշխարները : Ե. դարու երկրորդ կէսին ծանօթ էր ասոնց վկայարանութիւնը, յօրինուած հաւանօրէն առթիւ նորոգութեան Հռիփսիմէի մատուռին ի ձեռն Սահակայ : Խմբագրողին ծանօթ եղած են ի մէջ այլոց Ս. Թեկղի եւ Ս. Փերրոնէի վկայարանութիւնները հայերէն թարգմանութեամբ : Ինչպէս արդէն Ա. Գուշտիս նկատած էր, վկայարանութիւնս լոյս տեսած էր իբրեւ ուրոյն գործ. յետոյ միայն ներս առնուած է Ագաթանգեղոսի մէջ : Խմբագիրը միաբան մ'ըլլալու է Հռիփսիմէի եկեղեցւոյն. 608ին կը յիշուի «Սամուէլ սրբոյ Հռիփսիմէի» վանից երէց (Գիրք Թղթոց, 151) :

Աւանդութիւնը հոռոմայեցի գիտէ Հռիփսիմէն եւ Գայիանէն. վերջինս հաւանօրէն լատ. Cajus, Gaius, իգ. Gaia անունն է, -էն յաւելուածով (հմմտ. նաեւ լատ. Gaianus, Cajanus ածական ձեւը) . իսկ Հռիփսիմէ, որ վկայարանութեան մէջ կը մեկնուի «ընկեցեալ»¹⁰, ստուգարանուած յն. ρέπτο, ρέψω «ընկենում» բառով, կը գրուի նաեւ Հռիփսիմէ, որուն համար նկատի կրնայ առնուիլ ρόπτω, ρόψω «մաքրեմ, լուանամ, սրբեմ», ρόψεις «մաքրումն», իբրեւ անուն օտար ազգերու անծանօթ :

¹⁰ «Ենկեալ սրտուսն յերկնից... եւ ձայն զի ասէր առ նոսա, թէ Զօրացարուք... մատանոց զու, Հռիփսիմէ, ըստ անուանոց քում արդարեւ ընկեցեալ՝ եղեր... ի մահուանէ ի կեանս» Ագաթ. 96—97 :

Հոռոմայեցի կանանց երեւումը Հայաստանի մէջ զարմանալի պէտք չէ նկատուի, քանի որ կային բազմաթիւ հոռոմէական բանականացիներ Հայաստանի սահմաններու մերձաւորութեան, նախատեղիներ Հայաստանի թուին մէջ ցանցաւ չէին եւ Փոքր Հայք եւ այլուր : Այդ կանանց թուին մէջ ցանցաւ չէին եւ անոնք, որոնք յայտնի կամ գաղտնի քրիստոնեաներ էին : Այս տեսակէտէ հետաքրքրական է կնոջ մը տապանագիրը, գտնուած Փոքր Հայքի Սատաղ փոքրիկ քաղաքի մէջ, ուր կը յայտնէ, թէ ինքը Հոռոմ ծնած է, իր ասպնջական բնակութիւնն զտած է Սատաղի մէջ, ուր եւ վախճանած. արձանագրութիւնն է¹¹.

Roma mihi tellus
genus inde,
sed hospita sedes

Հոռոմ բնաշխարհս,
անկէ սերունդս.
բայց հոս՝ հիւրնկալու
բնականիստս

Վկայարանութիւնը այնպէս կը ներկայացնէ, թէ Հռիփսիմէ եւ ընկերուհիք, 33 թուով, Հոռոմէն ուղղակի վաղարշապատ հասնելու փորձերու վերջնական անհաջողակութիւնը հաստատեցին «ի հնձանայարկս սան եւ իրենց բնակութիւնը հաստատեցին «ի հնձանայարկս սան եւ իրենց բնակութիւնը ի հիւսիսոյ յարեւելից կուսէ» (էջ 85) : Խնդիր կրնայ ըլլալ հոս, թէ Գ. դարու առաջին տասնեակին թագաւորանի՞ստ քաղաք էր Նոր քաղաք (կամ վաղարշապատ) : Քաղաքիս ծագման մասին հատակոտոր մը, պահուած Սուրբասի քով (ը. բ. Մարտիրոս), հաւանօրէն հատուած մը Դիոն Կասիուսի Պատմութեան, կը հաղորդէ մեզի, թէ Պրիսկոս Արտաշատը կործանելէ ետքը (163ին), անկէ ոչ շատ հեռու հիմնարկեց Καρνή πόντις (Նոր քաղաք) եւ դրաւ հոն հոռոմէական պաշտօնակարգ, իր յաջորդն Մարտիրոս վերոս հոն ծագած ազգային ըմբոստացում մը զսպեց եւ քաղաքս Հայաստանի առաջին քաղաքը հռչակեց : Թէ տակաւին 185ին հոռոմէական բազմաձեռն պահակազորք ունէր քաղաքս ցոյց կու տայ արձանագրութիւն մը¹² : Ուրիշ կողմէ գիտենք, որ Սանատրուկ թագաւոր (իրը 110ին) Աշտիկառէ գիտենք, որ Սանատրուկ թագաւոր (իրը 110ին) Աշտիկառէ ոչ շատ հեռու, ուր Արածանի (Եփրատ) եւ Մեղ(ր) գետերը կը խառնուին, շինած էր արքայանիստ քաղաք մը Մծուրք անուն (Փաւստ. Գ. 14), ուր իբր 215/16ին արքայաժառանգն Տրդատ արձանագրել կու տար Ագաթանգեղոս փորագրելին Հայոց հին թագաւորներու անունները, ուստի տակաւին կը ծաղկէր քաղաքը : Զայս կը հաստատէ եւ այն պարագան, որ Գրիգոր առա-

¹¹ Անդերսոն-Կիւմոն, Պոնտական ուսումնասիրութիւնք. Թարգմ. Հ. Յ. Տաչեան, Վիեննա 1919, էջ 369 :
¹² Corpus Inscr. Lat. III, 6052. հմմտ. Mommsen, Römische Geschichte, V, 407 : 3*

Ղին եկեղեցին կանգնած է Աշտիշատի մէջ, ուր մնաց երկար ժամանակ նաեւ Հայոց եպիսկոպոսանոցը:

Նոր քաղաք (Վաղարշապատ) թագաւորանիստ եղաւ հաւանորէն 297էն ետքը, երբ Աղծնիք եւ այլ նահանգներ Հռոմայեցւոց անցնելով Տարօն ծայրագաւառ նկատուեցաւ: Արդէն Խոսրով Բ. ուշադրութիւն դարձուցած էր Վաղարշապատի շրջանին, անկելով Դուինի շուրջ կաղնիներ եւ կառուցանելով արքունի ապարանքներ: Քաղաքը ծաղկեցաւ հաւանորէն 297—338 խաղաղութեան տարիներուն Արշակ Բ. ի եւ Արիստակէս եպիսկոպոսապետի օրով: Այս շրջանին պէտք է ենթադրել Կաթողիկէին եւ այլ մատուռներու շինութիւնները. երբ նաեւ եպիսկոպոսարանը Վաղարշապատ պէտք է փոխադրուած ըլլայ, եթէ Աշտիշատի եպիսկոպոսանոցը բոլորովին լքուած ալ չհամարինք: Փաւստոսի համաձայն 364ին Վաղարշապատ քաղաքը Շապուհ Բ. ի գործը «ի հիմանց տապալած է եւ բնակչութիւնը 19.000 երգ» գերի տարած (Դ. 55) չթողլով ամենեւին շինուածք: Խնայուեցա՞ն այս բարբարոսական ակտիւութիւնէ քաղաքին մերձակայ սրբավայրերը. այս մասին խօսք չ'ըսեր Փաւստոս, բայց կ'ենթադրէր Ստ. Ասողիկ (տե՛ս վերը):

Այս շեղումէ ետքը դառնանք միւսանգամ Հռիփսիմէ տիկնոջ: Իր մասին ճշգրտոյն տեղեկութիւններ կը գտնեմ օտար աղբիւրներու մէջ: Առիթ ունեցած եմ խօսելու այդ աղբիւրներու նկատմամբ¹³: Խօսքս Գեղասիոս Կեսարացւոյ եւ Ռուփինոս Ակուիլիսիացւոյ մասին է, որոնք հաղորդած են թանկագին տեղեկութիւններ լսելով Բակուր վրացի իշխանի բերնէն: Դժբախտաբար տեղեկատուն զգուշացած է իր պատմուածքին մէջ յիշել որ եւ է անուն միջավայրի կամ անձի: Հայ աւանդութիւնը, սակայն, որ գրի առնուած է հին աղբիւրէ մը օգտուելով 492ին, կը թոյլատրէ անուններով մատնանշելու միջավայրերն եւ անձերը:

Գերի կին մը կ'ապրի մայրաքաղաքի մէջ խստակեաց կեանք մը. ան օտար է եւ քրիստոնեայ: Իր վշտամբեր կենցաղը զարմանք կ'արթնցնէ հեթանոսներու վրայ: Չ'ըսուիր թէ ունէ՞ր ան իր մօտ քոյր կամ ընկերուհի. ինչ որ կարելի է ենթադրել, նկատելով որ հեթանոս շրջանակի մէջ կ'ապրէր:

Մայր մ'իր հիւանդ զաւակը դռնէ դուռ կը շրջեցնէ, հարցնելով թէ գիտէ՞ մէկը դեղ իր հիւանդին դարման: Ճարահատ կը բախէ նաեւ օտարական տիկնոջ դուռը. ան կը պատասխանէ. նիւթական դեղ չեմ գիտեր, բայց յոյս ունիմ, թէ իմ Աստուածս

¹³ Հ. Ն. Ակինեան, Քրիստոնէութեան մուտքը Հայաստան եւ Վրաստան, Հանդէս Ամսօրեայ, 1947, էջ 407—432 (արատաղ. Վիեննա 1949, էջ 12—52):

կը բժշկէ. կ'առնէ հիւանդը իր խարազի մէջ, կ'աղօթէ, եւ մանուկը բժշկուած կը յանձնէ մօրը: Բժշկութիւնը բերնէ բերան կը հռչակուի: Ժամանակ մը վերջ կը հիւանդանայ թագուհին: Անօգուտ կ'ըլլան բժիշկներու ջանքերը: Կանայք կը յանձնարարեն դիմել գերի կնոջ. թագուհին իր մօտ կը կանչէ զանիկա. բայց ան կը պատասխանէ, թէ ինքը սովոր չէ տուներ այցելել. թաւան կը պատասխանէ, թէ ինքը կը հարցնէ. կը հաւատա՞ս դուհին կը տարուի իր մօտ: Տիկնոջ կը հարցնէ. կը հաւատա՞ս իմ Աստուծոյն. թագուհին կը հաստատէ. այն ատեն կ'առնէ զանիկա իր խարազին մէջ, կ'աղօթէ եւ հիւանդը կ'առողջանայ: Սա կը պատմէ իրողութիւնը թագաւորին. որ կը փութայ ընծաներ ուղարկել Տիկնոջ. բայց ան կը մերժէ ընդունիլ:

Թագաւորը իր նախարարներով որսի կ'երթայ. առապար ճանապարհներով կը հասնին որսավայրը. սկիզբ կ'ըլլայ որսորդութեան. կը հետապնդուին զազանները: Յանկարծ կը սկսի պայծառ օրը նսեմանալ. կը զարհուրի թագաւորը. կը դիմէ իր աստուածներուն. անօգուտ. խաւարը աւելի կը թանձրանայ: Կը մտաբերէ թագաւորը գերի կինը, որուն Աստուածը բժշկութիւն չնորհած էր իր դիւոյին: Կ'աղօթէ անոր Աստուծոյն. կ'ուխտէ. Եթէ ողջամբ տուն հասնիմ, պիտի ըլլանք ես եւ ժողովուրդ Գուերկրագաղուները: Ասոր վրայ խաւարը կը սկսի անօսբանալ, մթութիւնը կը փարատի. արդէն կէսօր էր: Թագաւորն եւ որսակիցները ողջանդամ տուն կը վերադառնան:

Պատահածը արեւի բոլորակ խաւարում էր, տեղի ունեցած 218ին, հոկտեմբեր 7ին, Հայաստանի մէջ տեսանելի ժ. Տ, 24—11, 04, մթադոյն բարձրակէտը ժ. 9, 40ին, ինչպէս բարի եղաւ ճշդել աստղագէտն Dr. Fuchs (Վիեննա), որուն շնորհակալութիւնս նաեւ այս առիթ: Դրոն Կասիոս, որ այս միջոցին Պերգամոն կը գտնուէր, կը հաւատէ թէ խաւարումս ընդհանուր սարսափ պատճառած է: Այս սարսափը աւելի ահաւոր եղած պիտի ըլլայ անոնց սրտերու վրայ, որոնք սարերու եւ ձորերու մէջ պաշարուած էին զրգուած զազաններէ: Պէտք է աչքի առաջ բերել նաեւ այն խուճապն ու շիտթը, որ ծագած պիտի ըլլայ արքունիքի եւ որսին մասնակից նախարարներու եւ անոնց կցորդներու ընտանիքներու եւ առ հասարակ մայրաքաղաքին մէջ, որոնք գիտէին թէ թագաւորն եւ իրենց սիրելիները այս արհաւիրքի ժամերուն կը գտնուին լեռներու խիւճերու մէջ, ժայռերու եւ դարաւանդներու... առջեւ:

Մեր ժամանակագրութեան համաձայն այս 218 տարւոյն Հայոց թագաւորն էր նորապսակն Տրդատ Բ., իր թագուհին էր Աշխէն.

այս պարագային գերի Տիկինն ալ ըլլալու է Հռիփսիմէ: Արդ կը պատմէ հայ աւանդութիւնը այս կապակցութեամբ, թէ Տրդատ նահատակել տուած էր Հռիփսիմէ կոյսը եւ իր ընկերուհիները. մասնաւորապէս Հռիփսիմէի մահը պատճառած էր թագաւորի սրտին սաստիկ տրտմութիւն: Փարատելու համար սրտացաւը, դէպքէն 6 օր ետքը (ուստի սահմի 2ին¹⁴), կը հրամայէ որսորդութեան ելլել: Ազաթանգեղոս կը գրէ. «յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ ամենայն զօրաց՝ ածեալ կուտեալ զպառականն, խուճապական սիւնեալ, երագագ տուեալ, քակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթալ ի դաշտն Փառական շեմակաց: Այն ինչ ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել՝ անդէն վաղվազակի պատուհաս ի Տեառնէ ի վերայ հասանէր. եւ հարեալ զթագաւորն այսոյն պղծութեան՝ ի կառացն ի վայր կործանէր...: Նաեւ ամենայն մարդիկն որ ի քաղաքին էին՝ նոյն օրինակ դիւարախք մոլեղնէին. եւ անհնարին կործանումն ի վերայ աշխարհին հասանէր: Եւ ամենայն ընտանիք քաղաքին, ծառայք եւ սպասաւորք առ հասարակ հարուածովք հարեալք լինէին. եւ անհնարին սուգ վասն հարուածոցն լինէր» (էջ 113—114):

Ոչ թէ թագաւորն կամ քաղաքացիքն են «դիւարախ մոլեղնորները, այլ ինքն «Ազաթանգեղոս». որ իր աչքի առաջ ունեցած յատակ աղբիւրը մոլեղնարար կը պղտորէ, ստեղծելու համար եղջերուաքաղներ, անհեղեղ հրէշներ: Գոնէ կեղծելու արուեստը գիտնար: Բարերախտարար իր անճարակութեամբը պահած է մեզի սկզբնագրէն բառեր, որոնք հնարաւորութիւն կու տան մեզի վերականգնելու բնագիրը դէթ մասամբ: Թէ հոս սկզբնագիրը դիտմամբ խանգարուած է, ակնյայտնի կը տեսնուի. թագաւորը իր զօրքին որսի ժամ կու տայ. անոնք «որսի շուները կ'առնուն իրենց հետ». կը հասնին որսավայրը. կ'արձակեն պառականը «խուճապական կը սիւնեն, երագագ, թակարդ կը ձգեն, Փառական դաշտի վրայ». այս նախադասութենէն ետքը ի՞նչ իմաստունի «թագաւորը դեռ նոր կառք նստած քաղաքէն դուրս ելլել կ'ուզէր». վասն զի խուճապականը չէր կրնար քաղաքին մէջ սիւնուիլ, եւ ոչ ալ թակարդն ու երագագը նոյն տեղ ձգուիլ: Միւս կողմէ թագաւորը կառքով պիտի մասնակցէր որսի: Եթէ թագաւորը աստուածապատիժ պատուհասուեցաւ իր մեղքին համար, ի՞նչ յանցանքի համար պիտի պատժուէին քաղաքացիք: Անճահ չափազանցութիւններ:

¹⁴ Սահմի 2 կը համապատասխանէ 444—447 տարիներուն հոկտ. 7ին. այս այն օրն է, երբ 218ին տեղի ունեցաւ Տրդատի որսն եւ արեւի խաւարումը: Տես առ այս վարը, էջ 43:

Տարակոյս չկայ թէ սկզբնագրին մէջ նկարագրուած էր որսին մեղմով սկզբնաւորութիւնն եւ խանդավառ ընթացքը. ապա արեւի խաւարումի պատճառած արհաւիրքը, սարսափը, խուճապը, ոչ միայն որսորդներու, այլ արքունիքի մարդկան, քաղաքացիներու եւ առ հասարակ երկրին բնակիչներու վրայ: Սկզբնագրէն են դոյզն փոփոխութեամբ՝ ընդգծուած տողերը:

Լսենք Բակուր իշխանն: Վերագարձէն ետքը թագաւորին առաջին գործը կ'ըլլայ տեսակցիլ անձամբ գերի Տիկինը հետ: Կը պատմէ անոր իր ուխտը. կը խնդրէ իրմէ սորվեցնել իրեն ճշմարիտ Աստուծոյ գաղափարը, քրիստոնէական կրօնի վարդապետութիւնը: Տիկինը կը տեսնէ թագաւորին եւ նախարարներու բարի տրամադրութիւնը:

Կը համոզէ թագաւորը, որ ամէն բանէ յառաջ եկեղեցի մը շինուի: Կը ձեռնարկուի շինութեան: Պիտի կանգնուէին հոն սիւներ. անոնցմէ մէկը անկարելի կ'ըլլայ հաստատել խարխիւի վրայ. մեքենաները կը կտորուին, փոկերը կը կտրուին, բայց սիւնը կը մնայ իր տեղոյն վրայ անշարժ: Լուր կու տան Տիկինը. ամբողջ գիշերը կը հսկէ աղօթքով: Առաւօտեան դէմ ինքն իրեն կը կանգնուի սիւնը, կը բարձրանայ եւ կ'երթայ կը կախուի օդէն խարխիւի վերեւ: Կու գան թագաւորն եւ այլ մարդիկ, կ'ապշին երբ կը տեսնեն ահագին սիւնը օդէն կախուած: Քիչ յետոյ սիւնը կ'իջնայ, կը հաստատուի խարխիւին վրայ:

Եկեղեցւոյ շինութենէն ետքը կը յանձնարարէ գերի կինը թագաւորին, որ պատգամաւորութիւն մ'ուղարկէ Կոստանդին կայսեր եւ խնդրէ անկէ, որ եպիսկոպոս եւ քահանաներ առաքէ: Կը հասնին քահանաներ, որոնք կը մկրտեն նորահաւատ ժողովուրդը, կ'ուսուցանեն եւ կը հաստատեն երկրին մէջ քրիստոնէական կարգերը:

Այսքան Բակուր իշխան: Եկեղեցւոյ շինութեամբ լրացած կը համարի Հռիփսիմէ իր գործը: Ազաթանգեղոսի համաձայն այս նախապատրաստական գործերը գլուխ հանած է Գրիգոր վիրապէն ելլելէն ետքը: Դիւահար թագաւորն եւ նախարարները կը խնդրեն իրմէ. «Խնդրեալու վասն մեր յԱստուծոյ քումմէ, զի մի կորիցուք: Իսկ կապեալն Գրիգորին անդէն խօսել սկսաւ եւ ասէ. Որ ասէքդ թէ 'Աստուած քո', Աստուած է եւ արարիչ...»: Սկզբնագիր աղբիւրին մէջ հաւանորէն խօսակցութիւնը Տրդատի եւ գերի կինը մէջ էր. ուշադրութեան արժանի է այս տեսակէտէ «կապեալն Գրիգոր». կապանքները բարձուած էին արդէն. խօսքը ապահովա-

Թեան, այլ մերձակայ եկեղեցական մետրապոլիտի մը կը գիմուի: Ագաթանգեղոս կը պատմէ, թէ Գրիգոր Կեսարիա ուղարկուեցաւ եւ ձեռնադրուեցաւ Ղեւոնդիոս արքեպիսկոպոսէն: Ղեւոնդիոս կը յիշուի Նիկիոյ Ժողովին (325) մասնակից եպիսկոպոսներու թուին մէջ. Գեղասիոս գիտէ զինքը «Ղեւոնդիոս Կեսարիայ Գամրաց, զարդ եկեղեցւոյ Աստուծոյ, ունէր իշխանութիւն եկեղեցեացն Գամրաց, Գաղատիայ, Պոնտոսի, Պափղագոնիայ, Պողեմոնականն Պոնտոսի, Հայոց Մեծաց եւ Փոքուն»: Բնականաբար Ագաթանգեղոսի ազբերին մէջ չէր կրնար այս գէպքին Ղեւոնդիոս յիշատակուած ըլլալ: 230ին Կեսարիոյ աթոռին վրայ կը ծաղկէր հոյակապ Փիրմիլիանոս¹⁵, որ վախճանեցաւ 268ին: Իր նախորդները ծանօթ չեն: Այսպէս թէպէտ անուամբ չենք կրնար յիշել այն մետրապոլիտն, որուն գիմեց Տրդատ հովուապետ մը խնդրելու, բայց անտարակուսելի կը համարիմ թէ Կեսարիայէն ուղարկուեցաւ արթուն Գրիգոր, ինչպէս անունն ալ կը վկայէ, որ Կապպադովկացւոց մասնաւորապէս սիրելի էր: Հայերէնախօս աշխարհին անշուշտ հայերէնագէտ հովիւ մը պիտի ուղարկուէր. եւ նուազ չէր հոն այս շրջանին հայերէնարարաւ Հայերու թիւը:

Նկատի առնելով որ արեւի խաւարումը տեղի ունեցաւ 218 հօկտ. 7ին, Հայաստանի քրիստոնէութեան դարձը պատահեցաւ Տրդատի թագաւորութեան առաջին տարիներուն, Հռիփսիմէի նախապատրաստութիւնները պահանջեցին իբր տարի մը, կրնանք Գրիգորի Հայաստան հասնիլը 219/20 տարւոյն նշանակել. այսպէս կ'ենթադրէ նաեւ Հայոց եպիսկոպոսապետներու Գաւազանագիրքի ժամանակագրութիւնը, Գրիգորէն մինչեւ Փառնեքսէ:

Թէ ի՞նչ եղաւ Հռիփսիմէի (եւ Գայիանէի) բախտը Գրիգոր եպիսկոպոսի գալէն ետքը, չգիտենք: Ագաթանգեղոս (էջ 449) ունի տեղիքս. «Իսկ թագաւորն շատ աղաչեաց զԳրիգոր վասն հանապարդք առ նմա կալոյ, զի ընդ ինքեան շրջեցուցէ. որում ոչ հաւանեալ չառնոյր յանձն, այլ յանապատ տեղիս հաճեալ բնա-

¹⁵ Եւսեր. Եկ. Պատմ. 2. 26: Հմմտ. Bardenhewer, անդ, Բ., էջ 269—272: Մովսէս Խորենացի, Բ., 75 կը գրէ թէ «Փերմիլիանոս... բազում խօսս արար, յորոց մի է Պատմութիւնն հալածանաց եկեղեցւոյ... գրէ գրագումս վկայեալս եւ ի խորովայ ի մերում աշխարհիս, համայն եւ յետ նորա օտարք յօտարաց. բայց զի ոչ ճշմարտութեամբ եւ սճով պատմէ եւ ոչ զանուանն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն՝ ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք երկրորդէլ: Նոյնպէս եւ զԱնտոնիմէ որդւոյ Սեւեբեայ ասէ պատերազմեալ ընդ վաղարշայ Պարսից արքայի ի Միջագետս ի մէջ Նիսիսիս եւ Խաւանու. եւ մերոյն խորովու ոչ յոք հակամիւլանսս չունի նման զիրք մը. եւ չէր ալ կրնար նկատի առնել զէպքեր որոնք 303էն ետքը կատարուած են: Անտոնիոս Կարակալլա եւ վաղարշ անուանց եւ զիպաց յիշատակութիւնը կ'ենթադրէ Փաւստոսի ժամանակագրութիւնը (Հմմտ. Սերիոս, էջ 14):

կութեամբ, սահովք կոխեալ զինքն»: Եթէ տեղիքս որ եւ է հին բնագրի մը յարասութիւնն է, կարող է մերձեցուիլ Հռիփսիմէի: Ան առանց տարակուսի մնաց Հայաստան եւ հոն ալ վախճանեցաւ սրբութեամբ եւ յիշատակը յարգուեցաւ հայ ժողովուրդէն:

ԵՐԿՈՒ ԵՂԱՎԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր քննութիւնները բերին զմեզ այն համոզումի, թէ այն ամէն տեղեկութիւնները, զորոնք հաղորդած է Բակուր իշխան (հայ կամ վրացի) 394ին Երուսաղէմ Գեղասիոս Կեսարացւոյ եւ Ռուփինոսի, նկատմամբ Գերի Կնոջ կամ Հռիփսիմէի, ըստ էական մասին կը նոյնանան հայ հին աւանդութեան այն հատակոտորներու հետ, զորոնք գտանք «Ագաթանգեղոսի» քով: Այս նոյնութիւնը կ'ենթադրէ հասարակաց ազբերը: Մենք այլ եւ այլ առիթներու մէջ մատնանիշ ըրինք, թէ Ագաթանգեղոսի ձեռքի տակ կը գտնուի Փաւստոսի Պատմութիւնը, ուսկից քաղուածքներ կու տայ: Փաւստոսի գործին յունարէն բնագիրը լոյս տեսած էր առ անագան 387ին. ուստի կարող էր ան 387—394 տարիներուն մատչելի եղած ըլլալ Բակուր իշխանին: (Այս մասին հմմտ. նաեւ իմ Քրիստոնէութեան մուտքը Հայաստան եւ վրաստան, էջ 44—45):

Հռիփսիմէի նախատակութեան ամիսն եւ օրը վկայաբանութիւնը կը նշանակէր «հորի ԻԶ» եւ Տրդատի որսի երթալն՝ անկէ վեց օր ետքը, ուստի սահմի Բ., որ 444—447 տարիներուն կը համապատասխանէր յուլեան տոմարի հոկտեմբեր 7ին: Այս այն օրն է, 230 տարի յառաջ, այսինքն 218ին, երբ Տրդատ որսի ժամանակ արեւի խաւարումի պատահած էր: Ինձի կ'երեւայ, թէ այս զուգարկիպութիւնը պատահականութեան չի կրնար վերագրուիլ: Այս տեղ հաշուագէտ միտք մը գործած է. որուն ծանօթ եղած է 218, հօկտ. 7ի զէպքը: Այդ անձն առանց տարակուսի Հռիփսիմեանց վկայագիրն է. որ ուղած է Հռիփսիմէի նահատակութիւնը թագաւորի որսի երթալէն 6 օր յառաջ տեղի ունեցած ցոյց տալ: Այդ անձանօթ վկայագիրը 440—450 շրջանի մարդ էր:

ՓԱՒԱՍՏՈՍ ԵՒ Չ. ՓԱՐՊԵՑԻ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՍԻՆ

Փաւստոս (Գ. 1) կը գրէ, թէ իր Պատմութիւնը բաղկացած է երեք գրքերէ, որոնք կը պարունակեն Առաջին, Միջին եւ Վերջին շրջանները. զատ է ասոնցմէ ժամանակագրութիւնը, զոր զետեղած է Պատմութեան սկիզբը: Այս երեք շրջաններն են, ինչպէս կը համարիմ.

Վրթանէս (Սիոն, 1927, էջ 24).

Ազար. 46—47.

Այսպէս եւ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, որ ասէ յԱզոթն իւրում.

Արդ մինչդեռ կայր նա (Գրիգոր) կախեալ՝ սկսաւ խօսել ի կախադանին այսպէս. Գոհանամ զքէն Տէր...

(4) Փոխանակ զըօշելոցն փայտից՝ զխաչն իւր կանգնեաց ի մէջ տիեզե-րաց:

(1) Վասն զի սիրեցին մարդիկ պաշ-տել զպատկերս մարդկազէմս փայ-տադործս ճարտարագործս հիւսանց, եղև ինքն պատկեր մարդկան, (2) զի զպատկերագործսն եւ զպատկերա-սէրսն եւ զպատկերապաշտսն յիւր պատկեր աստուածութեանն հնագան-դեցուցէ:

(3) Եւ զի սովոր էին մարդիկ երկիր պագանել անշունչ պատկերացն մե-ռելոց, եղև ինքն մեռեալ պատկեր ի վերայ խաչի. մեռաւ եւ անչնչացաւ,

(3) Եւ վասն զի սովոր էին մարդիկ երկիր պագանել անշունչ պատկերաց մեռելոց՝ եղև ինքն մեռեալ պատկեր ի վերայ խաչին. եւ մեռաւ եւ ան-չնչացաւ, զի ընդելականան զնոսա արագ արագ հնագանդեցուցէ իւրում պատկերին...:

(5) զի հաւատասցեն երկիր պագանել խաչին փայտի. եւ որ ի վերայ նորա պատկերն եւ մարդկազէմն իցէ.

(4) Եւ փոխանակ դրօշելոցն փայ-տից՝ զխաչն իւր կանգնեաց ի մէջ տիեզերաց, (5) զի որ սովորն իցեն երկիր պագանել փայտի՝ սովորակա-նաւ ընդելականան հաւատասցեն եր-կիր պագանել խաչին փայտի եւ որ ի վերայ նորա պատկերն եւ մարդկա-զէմն իցէ...:

(2) զի զպատկերագործսն եւ զպատկե-րասէրսն եւ զպատկերապաշտսն յիւր պատկեր աստուածութեան հնագան-դեցուցէ:

Քննական հրատարակութեան մէջ՝ «զըօշելոց փայտիցն» եւ «հաւանեցին» փոխանակ «հաւատասցեն»։ ուղղեցի համեմատ լաւագոյն ձեռագիրներու, որոնց ձայնակից է Վրթանէս:

Խնդիր կրնայ ըլլալ. Վրթանէս ըստ քմա՞ց համառօտած եւ տեղափոխութիւններ կատարած է, թէ հետեւած է համառօտ բնագրի մը: Յամենայն դէպս Ազաթանդեղոսի մէջ կան անկա-րելոր կրկնութիւններ:

Ղ. Փարպեցի (էջ 50—51) երկու անգամ յիշած է Գրիգորի անուան կից «եւ նորին զաւակի»: Հայ նախարարները կը դռնուին Տիգրան. կը խորհրդակցին իրարու հետ. կ'ըսեն. «կեամք ծա-ռայելով ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի, յոր ծնաք աւագանին նորոգութեամբ ի ձեռն ամենասուրբ վարդապետութեան նահա-տակին Գրիգորի եւ նորին զաւակի»: Ո՞վ է «նորին զաւակ». առ հասարակ ըմբռնուած է Գրիգորի զաւակ Արիստակէս: Եթէ այս է Ղ. Փարպեցույ մտածմունքը, հարկ է ընդունել, թէ իր ձեռքը

դռնուած Գրիգորի Պատմութիւնը կ'ենթադրէր զԳրիգորը Գ. դա-րուն. ուստի արդէն խանդարուած էր հոն ժամանակագրութիւնը: Փաւստոսի քով համապատասխան տեղիք (Գ. 2, 5, 10) օտարա-մուտ են:

Գրիգորի կենսագրութեան համար կը մնայ մեր ձեռքը միակ աղբիւր Փաւստոսի Պատմութիւնը, ուր կը դռնենք պատահական տեղիքներ, որոնք պահած են յուշեր Գրիգորի կեանքէն: Այս տեղիքները պիտի փորձեմ խնամով դասաւորել, ներս առնելով նաեւ Ազաթանդեղոսէն ինչ ինչ հատուածներ, որոնք հին աղ-բիւր, յանուանէ Փաւստոսի Պատմութեան սկզբնաղբիւրը կ'ենթա-դրեն:

1. Տրդատ Բ. կեսարիայէն Եպիսկոպոս կը խնդրէ: Ազաթան-դեղոս կը հաղորդէ. «Յայնժամ թագաւորն վաղվաղակի փութով եւ երկիւղիւ եւ մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զզլխաւորս նախարարացն եւ զկուսակալս աշխարհացն. Ա. իշ-խանն Անգեղ տան. Բ. իշխանն Աղձնեաց, որ է բղեաշխն մեծ. Գ. իշխանն Մարդպետութեան իշխանութեանն. Դ. իշխանն թա-ղակապ իշխանութեանն Ասպետութեանն. Ե. իշխանն Կորդուաց-պետութեան, զօրավար Հայոց աշխարհին. Զ. իշխանն Գու-լոց աշխարհին. Է. իշխանն Ծոփաց աշխարհին. Ը. իշխանն Գու-գարացոց աշխարհին, որ միւս անուանեալ բղեաշխն. Թ. իշ-խանն Ռշտունեաց աշխարհին. Ժ. իշխանն Մոկաց աշխարհին. ԺԱ. իշխանն Սիւնեաց աշխարհին. ԺԲ. իշխանն Ծաւդէից աշ-խարհին. ԺԳ. իշխանն Ուտիացոց աշխարհին. ԺԴ. իշխանն շա-հապ Զարաւանդ եւ Հեր գաւառի. ԺԵ. իշխանք են ընտիրք, կու-տանն. ԺԶ. իշխանն Արծրունեաց: Այս իշխանք են ընտիրք, կու-տանն. ԺԷ. իշխանն Սրբաբարեաց, իւրաւորք ի մէջ Հայաս-տանի, կողմնակալք, հազարաւորք, բիրաւորք ի մէջ Հայաս-տան աշխարհի տանն Թորգոմայ, զորս գումարեաց թագաւորն Տրդատ եւ առաքեաց զնոսա ի կողմանս կապուտկացոց, ի քա-ղաքն Կեսարացոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաթաք կոչեն. զի տարեալ զԳրիգորն՝ քահանայապետ կացուցեն իւրեանց աշխար-հին. եւ հանդերձեցան զէտակն ունել ճանապարհացն» (էջ 414—415):

Ազաթանդեղոսի համաձայն այս իշխանները առաջնորդած են Գրիգորը Կեսարիա, որպէս զի Ղեւոնդիոս արքեպիսկոպոսէն Եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունի նորահաւատ Հայաս-տանի համար: Այս իշխանացանկը սակայն կ'ենթադրէ Հայաս-տանը 297էն յառաջ. երբ Անգեղ տուն, Աղձնեաց բղեաշխութիւնը, Կորդուք, Ծաւդէք տակաւին Հոռոմայեցոց չէին անցած եւ ոչ ալ

Գուգարք Վրաց եւ Ուտի Աղուանից: Վերագոյն տեսանք, թէ Դ. դարու առաջին կէսին պատմական Տրդատ թագաւոր գոյութիւն չունէր. ուստի եթէ այդ 16 իշխանները կեսարիա ուղարկուած են, անոնք ոչ թէ Գրիգորը ձեռնադրութեան տանելու պաշտօնն ունէին, այլ յանձնարարուած էին կեսարիոյ մետրապոլիտէն եպիսկոպոս մը խնդրելու: Գրիգոր ձեռնադրուեցաւ իբրեւ առաջին եպիսկոպոս Հայոց եւ հասաւ Հայաստան յիշուած իշխաններու շքախումբով: Այս հատուածը առանց տարակուսի առնուած է Փաւստոսի Պատմութենէն, ուր անշուշտ նաեւ իշխաններու անունները արուած էին: Փաւստոս (Ե. 29) գետէր, թէ Հայոց եպիսկոպոսապետութեան թիկնածուները «սովոր էին առ հայրապետն տանել ի կեսարիա ի ձեռնադրութիւն»: այսպէս ի կեսարիա առած էին իրենց ձեռնադրութիւնը Յուսիկ, Փառնեբսեհ եւ Ներսէս եւն:

2. Գրիգոր առաջին եպիսկոպոս: Փաւստոս կ'անուանէ գրիգոր «Առաջին եւ Մեծն Գրիգոր» (Գ. 6, 13. Դ. 4) եւ «յառաջ-եպիսկոպոս եւ նախապատակ» (Գ. 6, 13): Կոչած է «Գրիգոր» եւ «Գրիգորիս»: Առաջին եւ Մեծ յորջորջած է անշուշտ զանազաներու համար Գրիգոր Բ.էն կոչուած առ հասարակ «Գրիգորիս»: Տիտղոսած է «քահանայապետ», «եպիսկոպոս», «եպիսկոպոսապետ» եւ «հայրապետ». «Լուսաւորիչ» առաջին անգամ կը հանդիպիմ Վրթանէս Գերգողի քով (յլ. Պատկերամարտից, Սիոն, 1927, էջ 24). Իսկ «Պարթեւ» յորջորջումը առաջին անգամ կը գտնեմ Կոմիտաս կաթողիկոսի Թուղթին մէջ (Գիրք Թղթոց, 214):

3. Գրիգոր ժամանակակից Տրդատ Բ.ի. Փաւստոս Դ. 14, 15, 31. Իսկ Գ. 14 Տրդատ կը կոչուի «յառաջընծայն Քրիստոսի թագաւորն Տրդատ». որ «թէ կամօք թէ ակամայ, որ արժանին լեալ էր նախածանօթ ի Քրիստոս հաւատոցն»:

4. Գրիգոր ի Տարօն. կործանումն բազմաց. առաջին եկեղեցի յԱշտիշատ: Փաւստոս կը գրէ. «Երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայր եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնոյ, ուր նշանօքն եղելովք կործանեցան բազինք մեհենիցն յայնժամ վաղ եւս առ Մեծան քահանայապետուն Գրիգորի» (Գ. 3): Դանիէլ ունէր «զաստիճան ակաւորն գլխաւորուցեացն ամենայն Հայաստանեայց... զի յառաջ նախ անդ շինեալ էր զտուրբ եկեղեցին եւ ուղղեալ սեղան յանուն Տեառն: Նոյնպէս եւ ի ներքոյ քան զնա Մարգարէանոցն Յովհաննու. նոյնպէս մօտ ի սուն Տեառն՝ Հանգիստ առաքելոցն»: Դանիէլ քորեպիսկոպոս

ձեռնադրուած էր «յաւուր յորում կործանեաց (Գրիգոր) զբազինս մեհենիցն Հերակլայ, այսինքն Վահագնի, որում տեղւոյ Աշտիշատն կարդացեալ, ուր նախ եղ զհիմունս եկեղեցւոյ սրբոյ» (Գ. 14): Աշտիշատի եկեղեցին շրջափակուած էր քաղաքորմով (Գ. 3): Դանիէլ իր կայեանն ունէր «յակնադրերն ի ներքոյ սարարձր մեհենատեղւոյն Հերակլեայ, որ կայ դէմ յանդիման լեւրինն մեծի, որ Յուլն անուանեալ կարդան ի բազնին տեղւոյն քացագոյն իբրեւ քարընկէց մի ի ներքոյ կուսէ» (Գ. 14): Հմմտ. Ագաթ. (էջ 423—424), որ այսպէս կը պատմէ բազններու կործանումը մեհեններու հետ. «... հողմ ուժգին բղխեաց ի խաճանիչ փայտէն... չոգաւ հարթեաց, տապալեաց, ընկէց զամենայն շինուածսն բազնացն. եւ այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչ ինչ ոք յայնմ տեղւոյ նշմարանս կարէր գտանել, ոչ քարի եւ ոչ փայտի... եւ եղ անդ զհիմունս եկեղեցւոյն. եւ ուղղեաց սեղան փառաց Քրիստոսի. զի անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեացն»: Ներսէս (իմացիր Արիստակէս) «երթեալ հասանէր ի կողմանս Տարօն գաւառին եւ ժողովէր առ ինքն զամենայն եպիսկոպոսունս... ի գիւղն Աշտիշատ, ուր զառաջին գեկեղեցին էր շինեալ եւ տեղի լեալ նախնեացն ժողովոյ (տպ. -վոց) սիւնհողոսին» (Փաւստ. Դ. 4): Եկն Ներսէս «յԱշտից տեղիս (տպ. յառաջին տեղին), ուր նախ էր գեկեղեցին շինեալ ի Գրիգորէ եւ զվկայարանսն սրբոցն վկայիցն. եւ անդ զիշատակս սրբոցն կատարէր» (Դ. 14):

5. Մեհեանները վերածուեցան եկեղեցիներու. Սրբատեղիք Փաւստոս. «Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետք Հայոց հանդերձ թագաւորօքն եւ մեծամեծօքն նախարարօքն եւ աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կոոցն եւ ապա յանուն Աստուածութեանն սրբեցան եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք. մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն, որ էին անդ, կատարել անդ ամի ամի յէ. սահմի ամսոյ (տպ. եւթն անգամ)... առաւել եւս ի մեծ Մարգարէարան մատրանն Յովհաննու. սոյնպէս եւ յԱռաքելարանս Տեառնաչափերտացն, սոյնպէս ի վկայարանս Մարտիրոսացն ամի ամի ժողովեալ զօր տօնին յիշատակի նոցա վարուցն զործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային» (Գ. 3): Արշակ Բ.ի բանակը հաւաքուած էր Շահապիվան տօնելու զաւուրս Նաւասարդաց: «Յայնմ աւուր ի Տրդատայ յաւանին Բազաւանին կարգեալ էր» (Դ. 15). Մանուէլ Մամիկոնեանն եւ իր զօրքը «մտին առաջի սուրբ ոսկերացն

ձայն Գրիգոր մկրտած է Տրդատն եւ արքունականներն եւ արքունի զօրքը (ԺԵ բիւր) «յափն Եփրատ գետոյն» (էջ 433):

9. Գրիգորի Քարոզութիւնը: Ազաթանգեղոս (էջ 439) այսպէս կը գծէ Գրիգորի քարոզութեանց սահմանները. «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչ ի ծագս ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն եւ աւետարանութեանն. ի Սատաղացւոց քաղաքէն մինչեւ առ աշխարհաւն Խաղտեաց, մինչեւ առ Կաղարջօք, մինչեւ ի սպառ [ի սահմանս Մասքթաց, մինչեւ ի դրունս Ալանաց, մինչեւ] ի սահմանս Կասպից ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց: Եւ յԱմդացւոց քաղաքէն մինչեւ առ Մծբին քաղաքաւ քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Երրական երկրաւն եւ առ Կորդուօք մինչեւ յամուր աշխարհն¹⁷ Մարաց. մինչեւ առ տամբն Մահքերտ[ան] իշխանին, մինչեւ յԱտրպատական ձգէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»: Այս հատուածը փոխառութիւն մ'է Փաւստոսի Բ. գրքէն, ուստի Փաւստեան հատակոտոր մը, որ կը ներկայացնէ Մեծ Հայաստանի սահմանները Տրդատ Բ. ի (217—253) օրով, որ մնաց այնպէս մինչեւ 297: Փաւստոս ուրիշ տեղ, իր ժամանակագրութեան մէջ Մեծ Հայաստանի սահմանները (Տրդատն Մեծի օրով) կը գծէ այսպէս, նո՛յն ոճով. Պարթեւաց Արշակ թագաւոր Հայոց Արշակ թագաւորին՝ «Չատուցանէ նմա սահմանս զԱրուստան առ երկրաւն Տաճկաց եւ առ երկրաւն Ասորւոց եւ զԿասպուակիա (Կասպաղովկիա) առ Կիւղիկեաւ մինչեւ ցեղր ծովուն մեծի Արեւմտից (Սեւ ծով) եւ ի հիւսիսոյ կողմանէ ցլեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս Արեւելից եւ անցանէ առ Մահկերտ տամբն (տպ. սահմանաւն), առ ամուր աշխարհաւն Մարաց եւ հասանէ ի լեառն Չարասպ¹⁸ եւ անցանէ առ Նոր Երրական երկրաւն»:

Հիւսիսէն Հայաստանի սահմանն էր Հարանդ գաւառն, որով Սիւնեաց եւ Արցախի սահմանները կ'աւարտէին, Փաւստ. (Գ. 6). Գրիգորիս, որ յառաջացած էր ի ճամբար բանակին Մաղքթաց, նահատակուեցաւ Վատնեան գաշտի վրայ. մարմինը «բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից՝ ի սահմանս Հայոց ի Հարանդ» եւ թաղեցին յԱմարաս. ուր Ս. Գրիգոր եկեղեցի մը կառուցած էր: Յուրտաւի (Գուգարք) եկեղեցւոյն պաշտօնեաները 606ին կը յայանեն իրենց շնորհակալութիւնը Վրթանէս Քերդողի,

¹⁷ Սերիոս, էջ 9 եւ 37:
¹⁸ Chron. Pasch. τὸ ὄρος του Ζάρα(σπου).

որ յորդորական թուղթ մ'ուղղած էր անոնց «յիշեցուցանելով սուրբ եւ զուղիղ հաւատն, զոր Մեծին սրբոյն Գրիգորի սերմանալ էր յայս ի Կաւկասային կողմանս» (Գիրք թղթոց, 132):

10. Դանիէլ ասորի քորեպիսկոպոս: Ազաթանգեղոս եւ ոչ յիշելու արժանի համարած է Դանիէլս, մինչդեռ Փաւստոս զանիկա Գրիգորի գլխաւոր գործակիցը կը ներկայացնէ. եւ «այր սքանհիւր» կ'անուանէ: «էր սա ազգաւ ասորի». «աշակերտ եղեալ էր սա Մեծին Գրիգորի», «եւ էր սա ընկալեալ զքորեպիսկոպոսութեան ձեռնադրութիւն աստիճանին ի ձեռաց Մեծին Գրիգորի յաւուր յձեռնադրութեան զրազինս մեհենիցն... Վահագնի» յԱշտիշատ: Կարգուած էր «վերակացու եւ գլխաւոր եկեղեցեաց նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռակալն իշխանութեան կողման մասին գործակալութեանն մեծի զատուորութեանն. ունէր զիշխանութիւնն զայն առանձինն. այլ (եւ) վերակացու եւ հրամատար տեսուչ եւ հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց: Ընդ ամենայն տեղիս, բարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց: Ընդ ամենայն տեղիս, քարոզեաց տա եւ անթիւս այլ եւ ի կողմանս Պարսից յօտար տեղիս, քարոզեաց տա եւ անթիւս ի մոլորութենէ դարձոյց: Եւ ունէր սա զաստիճան աթոռոյն գլխաւորութեան Տարօնոյ»: «Հաւատարիմ էր սա այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանութեան աթոռոյն հայրապետացն, հաստատութեան ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն» (Գ. 14): Ասոր աշակերտներն էին Շաղիտա ասորի, Եպիփան յոյն (Ե. 25, 26), Բասենի Արտիթ եպիսկոպոս (Զ. 7) եւ Գինդ անապատաւոր (Զ. 16): «Գեռ եւս կենդանի էր ծերունի սուրբն, մեծ քորեպիսկոպոսն Դանիէլ» յաւուրս Տիրանայ Ա. (295էն յառաջ) եւ նահատակուեցաւ բրածեծ թագաւորին հրամանով: Իր օգնականը կ'երեւայ թէ եղած է Փառէն (Փառնեբսեհ) «որ էր ի գաւառէն Տարօնոյ, ի մեծէ Մարգարէանոցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ տուն աղօթից եւ խնդրուածոց ի հանգիստ սրբոցն. զի տեղին այն նմա էր հաւատացեալ»: Փառէն եպիսկոպոսապետ ընտրուեցաւ Դանիէլի մահէն ետքը (Գ. 16):

11. Գերեզման Գրիգորի: Փաւստոս Գ. 2 կ'ըսուի. «Պատրաստեցան... շիրիմք հանգստեան Մեծին Գրիգորի ի Դարանաղեաց գաւառին, ի վիւղն որ անուանեալ կոչի թորդան»: Անդ, Գ. 14. «Ի Դարանաղեաց գաւառին, յեկեղեցին թորդանու պատուէին վասն գերեզմանացն հայրապետին Գրիգորի եւ Արիստակէսի»: Բայց Գ. 2 կ'ըսուէր Արիստակէսի համար, թէ «եղին զնա յեկեղեաց գաւառի(ն), ի թիւն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն»: Վրթանէսի մարմինը փոխադրուեցաւ թորդան

«եւ անդ առ Մեծի հայրապետին Գրիգորի զսորա զոսկերսն հանգուցանէին» (Գ. 11): Յուսիկ վախաճանեցաւ «ի Դարանաղեաց դաւառին, ի դեղջն թորդան եւ եղաւ մօտ առ Գրիգորի եւ ընդ հարս իւր» (Գ. 12): Զարմանալի է սակայն այս ամէնը, անով որ Գրիգորի ոսկրներու յայտնութիւնն Մանայարք լեռան վրայ եւ փոխադրութիւնն ի թորդան կատարուեցաւ 490/91ին, Վահանի մարզպանութեան օրերուն: Հոս յայտնապէս ուշ ժամանակի յաւելուածներ են այս տեղիքները:

Ղ. Փարպեցի երկիցս յիշատակած է, թէ Գրիգորի «Նշխարքները» ծանօթ էին արդէն Ն. դարու կէսին: Հայ Նախարարները երբ վերադարձան Յաղկերտ Բ. ի քովէն (450ին), անոնց ընդ առաջ ելան «դասք պաշտօնէիցն Քրիստոսի, բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին եւ զնշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրիգորի» (55): Նոյնպէս երբ Վահան Վաղարշ թագաւորի արքունիքէն յաղթական հասաւ Հայաստան, դիմաւորեց զինքը Յովհաննէս կաթողիկոս 484/5ին «պատուական նշանաւ խաչին եւ սուրբ նշխարօքն ճգնաղղեաց նահատակին Գրիգորի» (Փարպ. 176): Ղ. Փարպեցու ծանօթ է նաեւ «տեղի տան նահատակին Գրիգորի ի գեօղն որ անուանեալ կոչի Բագաւան» (139), որ նաեւ «Մատուռն Գրիգորի» կը կոչուի (էջ 141): Ասկէ կարելի է հետեւցնել, թէ Գրիգորի մահկանացու մնացորդներն յետ մահուան ամփոփուեցան ի Բագաւան ուրոյն Մատուռի մը մէջ, որ կը պատուէր մասնաւոր պաշտօնով ալ (հմմտ. Փարպ. 139):

Յեցած Փաւստոսի հաղորդած այս մանր տեղեկութիւններու եւ այն հատակոտորներու վրայ, որոնք պահուած են Ագաթանգեղոսի մէջ փոխառութեամբ Փաւստոսէ, կրնանք կազմել Գրիգոր Լուսաւորչի կենսագրութիւնն այսպէս.

1. Գրիգոր ծնած է իբր 190ին. Ապա «ի կողմանս Յունաց գաղթեաց. սնանէր եւ ուսանէր ի Կեսարիա Կապադովկացուց քաղաքին... եւ ուսեալ եւս գործառնական դպրութեան հանգամանս, ընտանի եղեալ Գրոց... որոյ անուն ճանաչէր Գրիգորիոս» (Ագաթ. 24—25): Իր «մանկութեան» շրջանին կը հայի Տրդատի խօսքը, ըսուած հարցաքննութեան առթիւ. կ'ուզե՞ս «լինել կցորդ կենաց իմոց, որպէս աշխատեցարն ընդ իս ի մանկութենէ վաստակովք» (էջ 61): Ինչպէս Նէոկեսարացին թէոզորոս (ծնած 213) հայրենիքէն ելաւ, որպէս զի ուսմանց պարապի, եւ ի Կեսարիա քրիստոնէութիւնն ընդունած (իբր 233ին) հայրենիք վերադարձաւ «Գրիգոր» անունով եւ իր հայրենի քա-

ղաքին՝ Նէոկեսարիոյ եպիսկոպոս կարգուեցաւ եւ պայծառացաւ «Սքանչելագործ» յորջորջմամբ, նոյնպէս Գրիգոր ուսման սիրով կամ այլ պատճառով Կեսարիա դացած եւ հոն քրիստոսածանօթ եղած կրնայ ըլլալ: Նկատի առնելու է եւ այն պարագան, որ Կապադովկիա, ուր Խոսրով Ա. († 216) իր բերդերն ունէր (Դիոն Կասիոս Հէ. 21), կային հայերէնախօսներ:

2. Հռիփսիմէ պատրաստած էր Հայաստանի մէջ հողը քրիստոնէական քարոզութեան համար:

3. Տրդատ ուղարկեց պատգամաւորութիւն մը Կեսարիա, խնդրելու եպիսկոպոս: Այս պատգամաւորութեան մասնակցած էին 16 գլխաւոր նախարարներ:

4. Գրիգոր կը հասնի Հայաստան, բերելով իր հետ «եղբայրներ»: Անոնց թուին մէջ էր անշուշտ Գանիէլ ասորի, որ քորեպիսկոպոս կը ձեռնադրուի Գրիգորէն ի Տարօն:

5. Գրիգոր կը կործանէ Վահագնի բազիլիկներն յԱշտիշատ, մեհեանը կը վերածէ եկեղեցույ. որ կ'ըլլայ առաջին մայր եկեղեցին: Կը կործանուին նաեւ ուրիշ մեհեաններու բազիլիկներ (Բացին: Կը կործանուին նաեւ ուրիշ մեհեաններու բազիլիկները կը շնորհաւան են): Մեհեաններու յատկացուած կալուածները կը շնորհուին եկեղեցույ: Կը նշանակուին քահանայութեան պտուղբ արմտեաց:

6. Գրիգոր կը բերէ Հայաստան սրբոց նշխարներ, կը հաւաքէ Հայաստանի մէջ վկայուած մարտիրոսներու ոսկրոտիք եւ կը զետեղէ եկեղեցիներու եւ մատուռներու մէջ. որոնք կրեցին Յովհ. Մկրտչի եւ Առաքելոց անունները¹⁰:

7. Մկրտեց Եփրատի ափերու վրայ, Ոսկիք կոչուած տեղը Տրդատն ու ընտանիքը, զօրքն ու ժողովուրդը:

8. Գրիգորի կայեանքն էր Հացեաց դրախտ (Ոսկիքի մօտ):

9. Տարօնէն անցաւ Հայաստանի միւս նահանգներն ու քաղաքները. քարոզեց եւ մկրտեց ժողովուրդը:

10. Մեհեաններու քուրմերն եւ քրմորդիները հրահանգեց քրիստոնէական վարդապետութեամբ. ձեռնադրեց անոնցմէ քահանաներ եւ եպիսկոպոսներ (Ագաթ.):

¹⁰ Կեսարիոյէն բերուած նշխարներու թուին մէջ կը յիշուի նաեւ Ս. Աթանազիոսեաց մատուք (Ագաթ. 422, 435): Աթանազիոսէն նահատակուեցաւ 303ին հրով (հմմտ. Վարք եւ Վկայար. Սրբոց, Ա. 46—47). ուստի եթէ որ եւ է մատուք բերուած է, բերուած ըլլալու է Արխատիկսի ձեռքով:

11. Հեթանոս սովորութիւններն ու տօնական օրերը չբարձաւ, այլ անոնց քրիստոնէական նկարագիր բաշխեց:

12. Գրիգոր 30 տարի ապրեցաւ իր ժողովուրդին մէջ աւետարանելով եւ ուսուցանելով: Վախճանեցաւ 249/250 տարւոյն:

13. Նշխարները ամփոփուեցան Բագաւան «Ս. Գրիգոր Մատուռին» մէջ (Փարպ.). որոնք յարգուեցան հայ ժողովուրդէն²⁰:

14. Ունեցաւ իրեն յաջորդ Մեհրուժան եպիսկոպոս:

Անշուշտ ամբողջ աշխարհը կամաւ չխոնարհեցուց իր պարանոցը Քրիստոսի ամենահեշտ լուծին տակ. նաեւ անոնք, որոնք յանձն առին այդ լուծը, միանգամայն աւետարանական բարձրագոյն վարդապետութեան ծանօթ եւ քրիստոնէական օրէնքներու կատարելապէս ընտանի չեղան: Փաւստոս Տրդատի համար կ'ըսէր. «Թէ կամօք թէ ահամայ որ արժանին լեալ էր նախածանօթ ի Քրիստոս հաւատոցն»: Նոյն միտքը աւելի բացայայտ կը դնէ մեր առջեւ, երբ կը նկարագրէ երկրին կրօնական կենցաղը Ս. Յուսիկի մահէն ետքը. «Ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեանն, լոկ միայն իբրեւ զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց եւ ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ: Ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով. բայց միայն սակաւ ինչ զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ (այսինքն ուսած էին բերանացի քարոզութենէ, անգրագէտ ըլլալով, իսկ զբագէտներ, որոնք ծանօթ էին յոյն կամ ասորի լեզուին, սակաւաթիւ միայն էին եւ տկար գիտութեամբ): Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին (τέχνη, դպրութիւն, քերականութիւն, զբագիտութիւն) էին՝ այլ խառնադանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն եւ կամ շինականութեանն, եթէ զցայգ եւ զցերեկ նստեալ վարդապետացն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ զյորդահեղեղ ինչ անձրեաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն եւ ոչ մի ոչ, եւ ոչ մի բան, եւ ոչ կէս բանի եւ ոչ դոյզն յիշատակ ինչ եւ ոչ նշմարանս ինչ գոք լսէինն, եւ ոչ կարէին ինչ ունել ի մտի: Վասն զի

²⁰ Վրթանէս Քերզոզ կը գրէ, թէ «Յեկեղեցիս քրիստոնէից եւ յարկս վկայիցն Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբն Գրիգոր եւ աստուածահաճոյ շարչարանքն իւր եւ սուրբ առաքինութիւնք. եւ զՄտեփանոս նախապապին ի մէջ քարկոծողացն. եւ զԵրանելի եւ զՓառաւոր կոյսն սուրբ զԳայիանէ եւ զՀովսէփէ հանդերձ ամենայն ընկերօքն եւ յաղթող նահատակօքն» (Յաւազա Պատկերամարտից):

միտք իւրեանց ընդ անպիտանս, ընդ անօգուտս եւեթ գրօսեալ էին... եւ դեպերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ըստ (տպ. ընդ) չքոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով: Եւ զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն. եւ ի նմին հաւատացեալք եւ ի նոյն հանապազորեալք... եւ զդիցն հնութեան պաշտամունս... ընդ խաւար կառարէին» (Գ. 13): Թէ կային իրօք հեթանոսական պաշտամանց նախանձախնդիրներ կը տեսնուի Փաւստ. Գ. 3էն:

Եւ զարմանալի չէ այս եւ կարելի չէ յոռետեսութեան վերադրել: Ինչպէս կը տեսնուի «ի հարկէ» բառէն, թաղաւորի սաստիկ հրամանն եղած է որ Հայաստանի մէջ ամէն մարդ կամայակամայ խոնարհի քրիստոսական լուծի տակ, քանի որ պետական կրօն հրատարակուած է քրիստոնէութիւնը: Բնականաբար ժամանակ մը, երբ նուազ էր քրիստոնեայ քարոզիչներու թիւը, երբ տակաւին անգրագէտ էր հայ ժողովուրդը, չէր կրնար թափանցել աւետարանական վարդապետութիւնը լոկ բերանացի քարոզութեամբ՝ ժողովրդեան սիրտը եւ այնտեղ մեծ եւ արագ փոփոխութիւն յառաջ բերել:

Ինչպէս քարոզութեան առաջին շրջանին ձեռք առնուած միջոցներէն եւ այլ հանգամանքներէն կարելի է հետեւցնել, Գրիգոր Լուսաւորիչ ունեցած է իրեն որոշ կանոններ լայնածաւալ հեթանոս աշխարհ մը քրիստոնէութեան շահելու: Այս կանոնները իրեն յանձնարարուած պէտք է ըլլան Կեսարիայէն. վասն զի նոյն գործելակերպը կը տեսնենք նաեւ Գրիգոր Սքանչելագործի քով, որ նոյնպէս Կեսարիա հրահանգուած էր նոյն Գ. դարու առաջին 30 ամեակին²¹:

Երկուքն ալ ջանք տարին ըստ կարելւոյն պահպանել տիրող կարգերը. կործանեցին, անյիշատակ ըրին Բագիններն իրենց կուքերով. մեհեանները վերածեցին եկեղեցիներու. փոխանակ բազիններու կանգնեցին սեղան. անոր տակ ամփոփեցին նահատակներու նշխարներ, անոր վրայ հաստատեցին խաչեր. եւ յորդորեցին ժողովուրդը խաչին երկրպագու ըլլալ եւ վկաները իբրեւ քրիստոնէական դիւցազներ պատուել: Պահեցին ժողովրդական տօներն եւ ուխտազնացութիւնները եւ ուրախութեան հանդէսները, պա-

²¹ Գրիգոր Սքանչելագործի վարքը, զրուած Գրիգոր Նիւսայիէն, տես նախնեայ թարգմանութեամբ վարք եւ վկայարանութիւն Սրբոց, Ա., Վենետիկ 1874, էջ 117—331: Հմմտ. A. Harnack, Die Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten, II (Leipzig 1906), էջ 174—177:

տուրքերով կատարել զանոնք ի յիշատակ եկեղեցւոյ սուրբերու եւ վկաներու. մասնաւորապէս օրեր նշանակուեցան Յովհաննէս Մկրտչի եւ Առաքելոց: Մեհեաններու նուիրական հողերն ու եկամուտները յատկացուեցան այժմ եկեղեցիներու, փոխանակ քուրմերու այժմ քահանաներ կարգուեցան, նոյն իսկ նախկին քուրմերէն եւ քրմորդիներէն: Չարմանալի պէտք չէ երեւայ, եթէ տեսնենք հայ ժողովուրդի քով տակաւին մնացած մատաղները, որոնք անշուշտ մնացորդներ են հեթանոսական զոհերու քրիստոնէական տարազի տակ իբրեւ ազապ, աղքատներու հանդէպ ողորմութեան եւ սիրոյ ցոյց:

Անոնք համոզուած էին թէ ընդարձակ աշխարհի հեթանոս ժողովուրդ մը երեկոյէն առաւօտ մէկ անդամէն չէր կրնար հրաժարիլ իր հայրենական աւանդութիւններէն եւ սովորութիւններէն եւ ոչ ալ մերկանալ հեթանոսութիւնն եւ զգենուլ քրիստոնէութիւնը. այս գործողութիւնը կը կարօտէր ժամանակի, իրենց յաջորդները սերունդէ սերունդ պիտի վատտակէին այս ասպարէզի վրայ, իրենք տնկեցին, որդիք եւ թոռուք շուր պիտի տային եւ միայն թոռներու որդիք պիտի վայելէին ծաղկալից ծառն եւ անոր պտղաբեր արդիւնքները: Իսկ այս ճանապարհի վրայ պիտի ապրէր անշուշտ եկեղեցին նաեւ յեղաշրջումի փորձեր. հեթանոսամիտ տոգոհներէ, այսպէս ըսուած ծայրայեղ ազգայնականներէ. Փաւստոս կը յիշէ դէպք մը Վրթանէսի օրով յԱշտիշատ (Գ. 3). այլուր (Գ. 11) կը յիշէ սաստիկ ընդհարում մը Հայոց եւ Պարսից մէջ, երբ մեծ թուով կորուստ ունեցան Հայերը, կոտորուեցան յանուանէ հայ աւագանին: Վրթանէս եպիսկոպոսապետ այդ անկեալները «նահատակներ» անուանեց ազգի եւ կրօնի համար. «զիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտենից, զի ամենայն ոք զսոցա յիշատակ քաջութեան իբրեւ Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ. եւ մեք տօնս արասցուք եւ ուրախ լիցուք»: Արդէն ամրացած էր հաւատքը նոր սերունդին մէջ: Յաջորդ սերունդը ի վիճակի էր արդէն յանուն քրիստոնէութեան դիմադրաւ ելլելու Մաքսիմիոս Դագա կայսեր լեզէոններուն դէմ (312ին), որոնք քրիստոնէայ Հայաստանի վրայ պատերազմի կու գային: Եւսերիոս Կեսարացի (Թ. 8), որ կը պատմէ դէպքս, կ'աւելցնէ թէ յաջողեցան Հայերը քաջօրէն յետս մղելու կայսերական բանակը (հմմտ. Փաւստոս, Գ. 11):

Հ. Ն. ԱՎԻՆԵԱՆ

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ
ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ
ԱՌ ՄԵՀՐՈՒԺԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՅՈՑ

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ

Դիոնեսիոս երիտասարդ էր տակաւին, երբ կ'ունկնդրէր Որոգինէսի դասախօսութիւններուն յԱղեքսանդրիա քրիստոնէական ուսմանց Դպրոցին մէջ: Նա շարունակեց հետեւել ուսմանց նաեւ Հերակղասի օրով, որ բարձրացած էր նոյն Դպրոցի կաթեղը, Որոգինէսի անկէ մեկնելէ յետոյ: 231/2ին վախճանելով Աղեքսանդրիայի Դեմետրիոս եպիսկոպոսը, անոր յաջորդ ընտրուեցաւ Հերակղաս, իսկ Դպրոցին գլուխ կարգուեցաւ Դիոնեսիոս: Հերակղաս մեռաւ 247/8ին. եւ աթոռին վրայ յաջորդ Դիոնեսիոս հրաւիրուեցաւ: Դեկոսի հալածանաց օրերուն (249—251) հալածանքի ենթարկուեցաւ նոյնպէս Դիոնեսիոս: Դեկոսի մահէն ետքը (251 նոյ.) վերադարձաւ ան իր աթոռը: 252—256 տարիներուն խաղաղութիւն վայելեց Աղեքսանդրիոյ Եկեղեցին: Հալածանքի հրդեհը միւսանդամ բոբրոքեցաւ 257/8ին Վաղերիանոս կայսեր հրամանով, մասնաւորապէս յԱղեքսանդրիա: Դիոնեսիոս աքսորուեցաւ Լիբիայի Կեփրոյ քաղաքը եւ ապա ի Կողզութիոն: Դագլիէնոսի հրովարտակը կը թոյլատրէր (262 մարտ), որ աքսորական եպիսկոպոսները վերադառնային իրենց թեմերը: Դիոնեսիոս դարձաւ Աղեքսանդրիա: Կը պատմէ Եւսերիոս, որ 264/5ին հրաւիրուած էր Դիոնեսիոս Անտիոքի ժողովին մասնակցելու. բայց ան իր բարձր տարիքին եւ տկարութեանց պատճառաւ հրաժարած էր: Դիոնեսիոս նոյն քաղաքը ժողովի կանչուած էր նաեւ 251/2ին: Վախճանեցաւ նոյն 264/5 տարւոյն: Եւսերիոս «Մեծ» կ'անուանէ զԴիոնեսիոս. մեծ եւ ականաւոր դէմք հանդիսացաւ ան իր անձնագոհ, բազմազիմի եւ շրջապէս գործունէութեամբ: Ամէնուն աչքերը յարած էին իրեն: Եւսերիոս կը թուէ անոր թղթակցութիւնները, գրուած ամէն ուղղութեան, մերձաւորին եւ հեռաւորին: Այս թուղթերը, որոնք բազմազան բովանդակութեամբ են, կը կազմեն յատկապէս իր գրականութիւնը. ունեցած է նաեւ ինքնուրոյն գործեր. ասոնք չեն հասած մեզի: Իր նամակներու եւ գործերու մասին խօսած է Եւսերիոս եւ ինչ ինչ յառաջընթացութիւններ տուած: Կան անոնցմէ կոչումներ նաեւ ուրիշ հեղինակներու քով: Անվատահելի են ուշ ժամանակի հեղինակներու քով յառաջ բերուած կոչումնք Դիոնեսիոսի անունով. ոմանց անհարազատութիւնը արդէն ապացուցուած: Այս եւ նման հարցերու շուրջ տես Otto Bardenhewer, Geschichte der altkirchlichen Literatur 2 (Freiburg i. Br. 1903), 167—191: